


ՄԵԽԹԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

**Հայաստանի
Հանրապետության
արդի
գյուղացիությունը**





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЦЕНТР ЭТНОКУЛЬТУРОЛОГИЧЕСКИХ
ИССЛЕДОВАНИЙ "ВОСТАН"

МХИТАР ГАБРИЕЛЯН

СОВРЕМЕННОЕ КРЕСТЬЯНСТВО РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

(этнографическое исследование)

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА

ЕРЕВАН 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿADEMԻԱ
ԴՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

«ՈՍՏԱՆ» Էթնուրշակութաբանական
Դետազութանունների Կենսըն

ՄԽԻԹ-ԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ազգագրական ուսումնասիրություն)

A II
90561



ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2001

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի և «Ոստան» էթնոմշակութաբանական
հետազոտությունների կենտրոնի որոշմամբ

Խմբագիր՝

պատմական գիտությունների թեկնածու Դ. Ս. Վարդումյան

Редактор

кандидат исторических наук Д. С. Вардумян

գ. 124 Գաբրիելյան Մ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

(ազգագրական ուսումնասիրություն): Խմբ.՝ Դ. Ս. Վարդումյան. -

Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, էջ 81:

Աշխատությունը նվիրված է վերջին տասնամյակում ՀՀ գյուղական միջավայրում կատարված տնտեսական, հասարակական, մշակութային գործընթացներին: Դիտարկված են հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացից հետո կատարված հիմնական փոփոխությունները, տնտեսավայրման նոր ձևերի ու եղանակների ամրագրման հետ կապված բարդությունները: Համեմատական նյութի օգտագործման միջոցով ներկայացված են ինչպես ողջ հանրապետությանը բնորոշ բնոյիան բնոյիան բնոյիան ներք, այնպես էլ տարրեր գյուղերուն, շրջաններում ու նարզերում դիտվող ռուսական հասանեահատկությունները, կապված գյուղական բնակչության սեռատարիֆային, տցիալմասնագիտական, ունցվածքային շերտավորման, տեղաշարժերի, գյուղատնտեսական մշակույթի, միջիամայնքային ու ներհամայնքային հարաբերությունների, արդի գյուղի զարգացման խնդիրների հետ:

գ. 0505000000 2001 թ.
703(02) – 2001

ԳՄԴ 63.5 (24)

ISBN 5-8080-0485-3

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,

«Ոստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոն, 2001 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ	
Հայաստանի գյուղացիությունն անկախացման նախօրեին	9
ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Տնտեսական վերափոխումներն արդի գյուղում	16
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Արտադրության մշակույթը արդի գյուղում	36
ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Գյուղական համայնքը և ազգակցական-դրացիական հարաբերությունների բնույթը արդի գյուղում	52
ՎԵՐՋԱԲԱՆ	67
Օգտագործված փաստաթղթերի, գրականության և սկզբնաղբյուրների ցանկ	74

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ հասարակության զարգացումը վերջին տասնամյակում (1990-ական թթ. սկսած) բնութագրվում է բազմաթիվ կտրուկ և արմատական փոփոխություններով:

Արցախյան շարժումը, Հայաստանի անկախացումն սկիզբ հանդիսացան այսօր աննախադեպ տարածում ու ընդգրկում ունեցող գործընթացների: Խոսքը քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային փոփոխությունների մասին է, որոնք ուղղակի ազդեցություն ունեն բնակչության սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական, ունեցվածքային բոլոր խմբերի և արժեքային կողմնորոշումները պայմանավորող հիմնական համալիրների վրա:

Հայաստանի գյուղացիությունը ևս վերջին տասնամյակում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների: Դրանք ազդել են վերջինիս կազմի, գրադարձների, գրադարձության, գյուղական բնակչության կենսագործունեությունն ապահովող համակարգերի վրա: Ավելին, գյուղում առաջինն են իրագործվել շուկայական հարաբերությունների ձևավորմանն ուղղված վերափոխումները: Գյուղի համար շրջադարձային էր 1991թ. սկսված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացը՝ դրական և բացասական բազմաթիվ հետևանքներով: Այն ուներ գյուղատնտեսական գործունեության կազմակերպման խորհրդային համակարգի բացասական իրադրությունների հաղթահարման, հողի մասնավոր սեփականության իրավունքի ամրագրման, շուկայական հարաբերությունների արագ ներդրման նպատակ:

Սույն աշխատանքի նպատակը գյուղական միջավայրում վերջին տասնամյակում կատարված և շարունակվող տնտեսական, հասարակական, մշակութային հիմնական փոփոխությունների ազգագրական դիտարկումն է:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում կիրառվել են ազգագրական գիտության մեջ ընդունված հետազոտական մեթոդները: Աշխատանքի համար հիմք են ծառայել Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում գրառված ազգագրական նյութերը: Դաշտային նյութեր հավաքվել են 1993–2000թթ.՝ ԵՊՀ ազգագրության ամբիոնի, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության և էթնուցիոնզիայի բաժինների, «Ոստան» էքնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոնի գիտարշավների կազմում: Որպես համեմատական նյութեր օգտագործվել են ԼՂՀ Շուշիի, Մարտունու, Հաղբուրի և Քաշարաղի շրջաններում 1996 թ. հեղինակի ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ա. Դարայյանի գրառած, ինչպես նաև ազգագրական արխիվային բազմապիսի նյութեր: Գյուղում կատարված փոփոխությունների ամբողջական ներկայացման նպատակով օգտագործվել են նաև ազգային փոքրամասնություններին վերաբերող նյութեր, որոնք գրառվել են «Ոստան» էքնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոնի իրականացրած «ՀՀ ազգային փոքրամասնություններին այսօր» հետազոտական ծրագրի շրջանակներում եղրիների (եղրի քրդերի), ոուսների, հույների, ասորիների միջավայրում*:

Հանրապետության գյուղացիության ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով կիրառվել է հետազոտության բազմաստիճան ընտրույթ, որը, նախևառաջ, արտահայտում է գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական գարգացման առանձնահատկությունները: Հաշվի են առնվել ՀՀ բնակչության էքնիկ կազմը, ժողովրդագրական, հասարակական կառուցվածքը: Հետազոտված գյուղերն առանձնացվել են մի քանի հիմնական չափանիշներով.
ա/ ըստ գոտիականության՝ լեռնային-ճախալեռնային-հարքավայրային գոտիներում գտնվող գյուղեր, թ/ ըստ բնակչության թվաքանակի՝ մեծ, միջին, փոքր գյուղեր, ք/ ըստ տնտեսական չափանիշների՝ հողառատ-սակավահող, գյուղմթերքների իրացման հնարավո-

* Ծրագիրն իրականացվել է Բաց Հասարակության Ինստիտուտի Հայկական Մասնածուղի Օժանդակության Հիմնադրամի աջակցությամբ: Հրատարակվել է «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր. I» աշխատությունը, Երևան 2000, (խմբագիր՝ Ցու. Ի. Սկրսումյան):

բուրյուններ ունեցող և չունեցող գյուղեր, ու ըստ ըմտանիքների ունեցվածքի՝ հարուստ, միջին, աղքատ, և էքստրեմիլ կառուցվածքի և այլն։ Կատարվել է նաև շափանիշների զուգակցում՝ այս կամ այն գյուղն ընտրվել է ոչ թե մեկ, այլ մի քանի շափանիշների կարևորման միջոցով։ Ընդհանուր առմանք, օգտագործված է հանրապետության շուրջ 150 գյուղում գրառված նյութ։

* Ծնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության և էրնուոցիոլոգիայի բաժինների և ԵՊՀ ազգագրության ամբիոնի աշխատակիցներին։ Եյութերը տրամադրելու և մասնագիտական խորհուրդներով օգնելու համար։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Հայաստանի գյուղացիությունն անկախացման նախօրեկին

20-րդ դարի ընթացքում գյուղի զարգացումը Հայաստանում պայմանավորված է եղել բազմաթիվ, հաճախ՝ բավականին կտրուկ փոփոխություններով: Ըստ այդմ էլ առանձնանում են գյուղի զարգացման հիմնական փուլերը՝ նախախորհրդային, խորհրդային և ետխորհրդային: Խորհրդային փուլն իր հերթին բաժանվում է ենթափուլերի՝ կողեկտիվացմանը նախորդող, երր գյուղում արտահայտված էր հողի և արտադրության այլ միջոցների նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը, զանգվածային կողեկտիվացում՝ համաժողովրդական սեփականության հաճախ հարկադրական անրագրումով: Խորհրդային պետության գոյության վերջին տասնամյակները և հատկապես 1970-80-ական թթ. կարելի է առանձնացնել որպես տնտեսական, հասարակական, մշակութային զարգացման հիմնական սկզբունքների համեմատական կայունացման ենթափուլ:

Առանձնացված ենթափուլերից յուրաքանչյուրն իր ուրույն դրոշն է թողել գյուղի զարգացման ընթացքի վրա՝ դառնալով կառուցվածքային փոփոխությունների, սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ու ենթախմբերի ձևավորման, զրադապության համակարգում կատարված տեղաշարժերի պատճառ:

Փոփոխություններից ամենակարևորը, որը դիտվել է 20-րդ դարի ընթացքում, կապված է հանրապետության բնակչության ընդիհանուր թվի մեջ գյուղական բնակչության տեսակարար կշռի նվազման հետ, ինչը բնորոշ է ոչ միայն Հայաստանին, այլև նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեծ մասին: Այսպես, ըստ 1939թ. մարդահամարի

արդյունքների. Հայկական ԽՍՀ գյուղական բնակչությունը կազմել է 71 % (ԽՍՀՄ միջինը՝ 68%), 1959թ.՝ 50 % (52 %), 1970թ.՝ 40 % (44 %), 1979թ.՝ 34 % (38 %), 1989թ.՝ 31 % (34 %):

1989թ. տվյալների համաձայն, գյուղական բնակչության ավելի ցածր տեսակարար կշիռ ունեցել են ՌԽՖՍՀ-ն՝ 26 %, Էստոնական ԽՍՀ-ն՝ 28% և Լատվիական ԽՍՀ-ն՝ 29 %: Գյուղական բնակչության ամենաբարձր տեսակարար կշիռն արձանագրվել է Տաջիկական ԽՍՀ-ում՝ 67 % [50, 9-12]: Հայաստանում գյուղական բնակչության տեսակարար կշիռն ավելի ցածր է եղել, քան միջին միութենականը: Դիտարկվող ժամանակաշրջանում, գյուղական բնակչության տեսակարար կշռի նվազմանը զուգընթաց, նվազել է նաև գյուղական բնակավայրերի թիվը: 1926-1994թթ. հանրապետությունում վերացել է 279 գյուղ, որից 8-ը՝ 1987-1994թթ. [12, 99; 45, 43]: Գյուղական բնակավայրերի թիվը պակասել է ներկայիս բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի մարզի, որտեղ գյուղերի թիվն ավելացել է 12-ով՝ 82-ից հասնելով 94-ի: Արագածոտնի մարզում գյուղական բնակավայրերը պակասել են 33-ով՝ 142-ից 109, Արարատի մարզում՝ 67-ով, 159-ից 92, Գեղարքունիքի մարզում՝ 24-ով, 115-ից 91, Լոռու մարզում՝ 43-ով, 162-ից 119, Կոտայքի մարզում՝ 21-ով, 82-ից 61, Շիրակի մարզում՝ 26-ով, 148-ից 122, Սյունիքի մարզում՝ 84-ով, 206-ից 122, Վայոց ձորի մարզում՝ 30-ով, 81-ից 51, Տավուշի մարզում՝ 40-ով, 100-ից 60 [45, 43-49]:

Այս գործընթացները, բնականաբար, ազդում են գյուղական բնակչության տարաբնակեցման, ըստ առանձին վարչական շրջանների տեղաբաշխման, գյուղերի մարդաշատության և գյուղական բնակչության կենսագործունեությունը պայմանավորող հիմնական գործուների վրա: Չնայած գյուղական բնակչության տեսակարար կշռի նվազմանը, աճում էր վերջինիս բացարձակ թիվը՝ 1970թ. 1.010.341 մարդ, 1979թ.՝ 1.038.208 մարդ, 1989թ.՝ 1.080.100 մարդ [50, 27]: Սակայն բնակչության աճը տեղի էր ունենում ոչ հավասարաշափ: Ավելին, 1970-1988թթ. նախկին վարչական շրջաններում գյուղական բնակչության տեղաբաշխման անհամանառությունն ավելի էր մեծացել: Ինչպես նախկինում, այս տարիներին ևս գյուղական բնակչության բարքանակում բարձրացել էր ներկայիս Արարատի,

Արմավիրի, Կոտայքի մարզերի բաժինը, 1970թ. 33.5%-ից 1988թ. հասնելով 39%-ի: Սրան զուգընթաց, ծայրամասային-սահմանային և լեռնային շրջաններում նվազում էր գյուղական բնակչության թիվը: Սյունիքի մարզում նշված ժամանակամիջոցում այն նվազել է ավելի քան 17.6 հազարով. Լոռու մարզում՝ մոտ 8.9 հազարով [45, 62]: Նույն շրջանում դիտվել են նաև բազմաթիվ այլ փոփոխություններ, կապված ըստ բարձրության գոտիների բնակավայրերի տեղաբաշխման, մարդաշատության, բնակչության խտության հետ [11; 12; 45; 46, 109-154, 228-285]:

Վերջին տասնամյակներում բավականին արագ էին փոխվում նաև գյուղական բնակչության գրադարձներն ու գրադարձության ոլորտները: Փոփոխություններն ունեին տարրեր պատճառներ. 1960-ական թթ. սկսած, քանակական և որակական նկատելի տեղաշարժեր էին կատարվում կոլեկտիվ և խորհտնտեսությունների տնտեսական-կազմակերպական կյանքում: Մի կողմից, փոքր կոլտնտեսությունների միավորման միջոցով տեղի էր ունենում դրանց խոշորացում, մյուս կողմից՝ տնտեսապես բույլ կոլտնտեսությունների բազայի վրա կազմակերպվում էին խորհտնտեսություններ: Խորհտնտեսություններ կազմակերպվում էին նաև նոր յուրացվող հողերում: 1960թ. Հայաստանում կար 83 խորհտնտեսություն: 1988թ. դրանց թիվը հասավ 529-ի, կոլտնտեսություններինը՝ նոյն ժամանակահատվածում 760-ից իջակ 275-ի: Աշխատողների միջին տարեկան թիվը կոլտնտեսություններում կազմել է 67.0 հազար մարդ. խորհտնտեսություններում՝ 112.0 հազար մարդ, գյուղատնտեսական համախառն արտադրանքը՝ 1983թ. համադրելի գներով կազմել է՝ համապատասխանաբար 338.9 միլիոն և 564.1 միլիոն ռուբլի [12, 245-247]: Հայաստանում կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների միջին չափերը գրեթե բոլոր պարամետրերով երկուսից հինգ անգամ փոքր են եղել ԽՍՀՄ համանման ցուցանիշներից: Գյուղատնտեսական ձեռնարկությունների շուրջ 1/3-ը աշխատել է վնասով կամ ցածր շահութաքայլությամբ [12, 246]:

Տեղաշարժերի հաջորդ պատճառը նշված տարիներին գյուղերում արդյունաբերական ձեռնարկությունների և մասնաճյուղերի հիմնադրումն է [75; 76]: Փոփոխությունների արդյունքում Հայաստանում

1959-79թթ. ավելի քան երեք անգամ աճել էր զյուղատնտեսական և արդյունաբերական քանվորների թիվը (20.1%-ից 61.4%): Համապատասխանաբար, գրեթե երեք անգամ նվազել էր կոլտնտեսականների թիվը (69.4%-ից 23.9%) [75]: Միայն 1970-1988թթ. հանրային արտադրության մեջ զբաղված կոլտնտեսականների թիվը 103.5 հազարից իշել էր 67.3 հազարի [12, 90]:

Նույն ժամանակահատվածում ձևավորվել էին նաև զյուղատնտեսության տարրեր ճյուղերի զարգացման որոշակի առանձնահատկություններ: 1970-80-ական թթ. զյուղատնտեսության երկու գլխավոր ճյուղերի՝ Երկրագործության և անասնապահության միջև ստեղծվել էր կայուն համամասնություն, որը հիմնականում համապատասխանում էր հանրապետության բնատնտեսական ռեսուրսներին [12, 250] և հայոց տնտեսաձևի ավանդույթներին: Հանրապետության խորհութնտեսություններից 299-ը նշված շրջանում ունեին կարևոր արտադրության ուղղվածություն, 95-ը՝ պտղախաղողագործական և խաղողագործական, 37-ը՝ քանօարարուծական, 35-ը՝ ոչխարարուծական, 26-ը՝ բոչնարուծական, 7-ը՝ խոզարուծական, 4-ը՝ հացահատիկային ուղղվածություն: Վարչական 37 շրջաններից 23-ում անասնապահության տեսակարար կշիռը կազմում էր զյուղատնտեսության համախառն արտադրանքի կեսից ավելին: Երկրագործության տեսակարար կշիռը զյուղատնտեսության համախառն արտադրանքում բարձր էր հատկապես խաղողագործական, պտղաբուծական և քանօարարոստանային բույսերի մշակության շրջաններում՝ Արարատյան դաշտում, Նոյեմբերյանում, Մեղրիում և այն շրջաններում, որտեղ զարգացած էր ծխախոտի մշակությունը (Շամշադին, Իջևան, Վարդենիս): [12, 247-250]:

Հայաստանում զյուղատնտեսության ճյուղերի զարգացումը պայմանավորված էր լեռնային երկրներին բնորոշ առանձնահատկություններով՝ հողահանդակների մասնատվածությամբ և փոքր չափերով. ըստ ուղղաձիգ գոտիականության զյուղատնտեսության տարրեր ճյուղերի զարգացման՝ միմյանցից տարրերվող հնարավորություններով և այլն: Այսպես, հանրապետության 492.7 հազար հա վառելահող բաղկացած է 147.6 հազար հողակտորից, հողակտորների միջին չափը կազմում է շուրջ 3 հա [11; 12, 255; 46; 72]: Բնակչության

մեկ շնչին հասնող գյուղատնտեսական հողատարածությամբ, մանավանդ վարելահորերով, Հայաստանը ԽՍՀՄ ամենասակավահող հանրապետությունն էր [12, 258]: Այս իրողությունները պայմանավորում էին նաև երկրագործության տարբեր ճյուղերի զարգացումը: Հայաստանում անընդհատ, բացառությամբ 1950-ական թթ., նվազել է հացահատիկային կուլտուրաների ցանքատարածության տեսակարար կշիռը, 1940թ. 78.4%-ի դիմաց այն 1988թ. կազմել է 29.5%: Մեծ տատանումներ են կրել տեխնիկական կուլտուրաներով զբաղեցված տարածությունները, որոնք նույնակա 1958 թ.-ից սկսած անընդհատ նվազել են: Ծխախոտի կուլտուրան փաստորեն տարածվել է վերջին 50-60 տարիների ընթացքում: Կարտոֆիլի և բանջարաբռատանային կուլտուրաների ցանքատարածությունները նույնակա կրել են զգայի փոփոխություններ: Դրանք ընդարձակվել են հացահատիկի, տեխնիկական կուլտուրաների տարածությունների կրծատման հաշվին: Աստիճանաբար ընդարձակվել են նաև խաղողի և պտղատու այգիները, ինչպես նաև կերային կուլտուրաների ցանքատարածությունները [12, 271]: Փաստերը խոսում են այն մասին, որ չնայած բացասական իրողություններին, Հայաստանում երկրագործության զարգացման նպատակաուղղված քաղաքականություն է իրականացվել:

Անասնապահության զարգացումը նույնակա պայմանավորվել է բնակլիմայական պայմանների առանձնահատկություններով: Անասնապահության առաջատար ճյուղ եղել է խոշոր եղքերավոր անասնապահությունը, որի մեջ գերակշիռ տեղ է գրավել կարնամսատու տավարաբուծությունը:

Գյուղատնտեսության զարգացման մասին խոսելիս պետք է անդրադառնալ նաև գյուղացիական անձնական օժանդակ տնտեսություններին, որոնց նկատմամբ հակասական քաղաքականություն է վարվել ԽՍՀՄ գոյության համարյա բոլոր տասնամյակներին [12, 251; 78; 79]: Անձնական օժանդակ տնտեսությունները զբաղեցրել են ցանքատարածությունների ընդամենը 6.3%-ը, սակայն տարիներ շարունակ տվել են գյուղատնտեսական մի շարք հիմնական մթերքների մինչև 50 և ավելի տոկոսը: Այսպես, 1988թ. դրանք տվել են հանրապետությունում արտադրված կարտոֆիլի 58.2, բանջարեղենի՝ 48.6, պտղի՝ 51.9, խաղողի՝ 14.8 %-ը [12, 251]: Տվյալներն ինքնին ցույց են տալիս օժանդակ տնտեսությունների ոչ այնքան բարձր եկամտաբե-

բուրյունը, որքան խորհրդային շրջանում հանրային տնտեսավարման անարդյունավետությունը:

Փաստորեն, խորհրդային շրջանում և հատկապես 1970-80-ական թթ., գյուղի զարգացումը բնորոշում էին և դրական և՝ բացասական բազմաթիվ իրողություններ:

Հասարակական-մշակութային տեսանկյունից կարևոր նշանակություն ունի այն, որ վերոնշյալ գործընթացները 1970-80-ական թթ. հանգեցրել էին սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ու ենթախմբերի (տեխնիկական, վարչական մտավորականություն, արդյունաբերական բանվոր-ծառայողներ) ձևավորմանը. բազմազանություն մոցնելով գյուղի հասարակական և համայնքային կառուցվածքներում [48; 49; 55, 123-137; 57, 73-82; 58, 5-12; 63, 500-534; 66; 70; 74, 52-62]: 1970-80-ական թթ. արդեն որոշակի տարրերություններ էին դրսևորվում տարրեր խմբերի ու ենթախմբերի մասնագիտական պատրաստվածության, հոգևոր և նյութական պահանջմունքների ոլորտներում: Արդյունաբերական բանվորները միջանկյալ դիրք էին գրավում քաղաքային արդյունաբերական բանվորների և ազգարային բնագավառի աշխատողների միջև: Նրանց մեջ 1.5 անգամ ավելի, քան սպասարկման ոլորտում և 1.3 անգամ ավելի, քան գյուղատնտեսությունում, շատ էին երիտասարդները: Երիտասարդների տեսակարար կշիռը բարձր էր նաև սպասարկման ոլորտում և կրթամշակութային հիմնարկություններում:

Նշենք նաև, որ չնայած գյուղի հանդեպ վարփող նման քաղաքականությանը, 1970-80-ական թթ. դեռևս հաղթահարված չէր տարրեր գյուղերի զարգացման անհամամասնությունը, լուծված չին գյուղական բնակչության և հատկապես երիտասարդության զբաղվածության հարցերը: Դա է այն կարևոր պատճառներից մեկը, որ գյուղական երիտասարդության մի ստվար հատված նախընտրում էր քաղաքներ տեղափոխվելը, որտեղ ավելի մեծ էին բարձր դիրք ու կենսամակարդակ ապահովելու հնարավորությունները: Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ չնայած ողջ հանրապետությանը բնորոշ գործընթացներին, տարրեր գյուղական բնակավայրերում դիտվում էին նաև սոցիալ-մասնագիտական, սեռատարիքային կառուցվածքի հետ կապված առանձնահատկություններ: Լեռնային գյուղերում, որտեղից արտահոսքի տեմպերը բարձր էին, չկար սոցիալ-մասնագիտական խմբերի այն բազմազանությունը, որը դիտ-

վում էր հարքավայրային, մասամբ նաև՝ նախալեռնային գոտիների գյուղերում:

Երիտասարդության մեծ մասի հեռանալը ձևավորում էր այնպիսի վիճակ, եթե գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման անբողջ ծանրությունն ընկնում էր գյուղում մնացած մեծահասակների ուսերին: Նման գյուղերում սահմանափակ էին նաև բնակչության վերաբարդության հնարավորությունները: Հարքավայրային ու նախալեռնային գոտիների գյուղերում արդեն դրսևորվում էր փոփոխություններով պայմանավորված բազմազանությունը: Այստեղ սոցիալ-մասնագիտական տարրեր խմբերը, հատկապես արդյունաբերական բանվորներն ու ծառայողները, գյուղական մտավորականության ներկայացուցիչները կարևոր դեր էին խաղում հասարակական հարաբերություններում: Քաղաքների հետ սերտ շփումները, նոր մասնագիտությունների յուրացման հնարավորությունները, մշակութային ակտիվ կյանքը, բնականաբար, ազդում էին նաև հոգևոր և նյութական պահանջմունքների բարձրացման վրա: Հարքավայրային գոտու գյուղերի մի մասում, հատկապես խոշոր արդյունաբերական կենտրոնների հարեւանությամբ գտնվող գյուղերում, կենսամակարդակն աստիճանաբար մոտենում էր քաղաքայինին, ինչը պակաս հատկանշական էր լեռնային գյուղերի համար:

Տնտեսական բնույթի փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն էին ունենում հասարակական, մշակութային հարաբերությունների վրա և հաճախ հանդես էին գալիս որպես դրանցում դրսևորվող նոր իրողությունները պայմանավորող էական գործոն: Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի հատկապես ազգագրական տեսանկյունից, քանի որ հասարակական հարաբերություններում դրսևորվող նոր իրողություններն իրենց հերթին պայմանավորում էին դրացիական, ազգակցական, ներընտանեկան կենցաղային և տնտեսական հարաբերություններում կատարվող փոփոխությունները: Փաստորեն, 1970-80-ական թթ. հայկական գյուղի զարգացումը բնութագրվում էր հակասական, հաճախ նաև իրարամերժ գործոնների առկայությամբ, որոնց մի մասը, ըստ էության, կանխորոշում է նաև արդի գյուղի զարգացման որոշ միտումները:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Տնտեսական վերափոխումներն արդի գյուղում

1. Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման օրենսդրությունը

Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորմանը և ճասնավոր սեփականության իրավունքի ամրագրմանն ուղղված առաջին քայլն էր, որը նաև նպատակ ուներ հաղթահարել խորհրդային պլանային տնտեսության բազմաթիվ բացասական իրողությունները [24; 39, 36-42]: Որպես գյուղատնտեսությունում ստեղծված ճգնաժամի հաղթահարման հիմնական տարբերակ կիրառվեց համատարած և արագ սեփականաշնորհումը: Նորանկախ համապետության օրենսդիր և գործադիր իշխանությունը ձեռնամուխ եղավ հողի անհատույց սեփականաշնորհմանն ու անասունների, տեխնիկայի, գյուղատնտեսական նշանակության կառույցների վաճառք-մասնավորեցմանը:

Վերափոխումները կանոնակարգող օրենքները և կառավարության որոշումներն ընդունվեցին հապճեպ, կարճ ժամանակահատվածում, երբ դեռևս վերջնականապես հստակեցված ու օրենսդրուեն ամրագրված չեին տնտեսական վերափոխումների հիմնական դրույթներն ու տնտեսական զարգացման գերակայությունները և դրանց իրագործման մեխանիզմները: Շտապողականությունը, բնականաբար, բացասաբար ազդեց գործընթացի իրագործումն ապահովող օրենսդրական դաշտի ձևավորման վրա: 1991թ. ընդունված տարրեր օրենքներում և որոշումներում [1; 3, 5; 6], ինչպես նաև գործընթացի անմիջական իրագործման փուլում գերիշխում էր այն մի-

տումը, որ վերափոխումները միաժամանակ և արագընթաց պետք է իրագործվեն հանրապետության բոլոր գյուղերում և գյուղատնտեսության բոլոր ճյուղերում:

Վերափոխումները կանոնակարգող օրենսդրական հենքը ընդգրկում էր 1991թ. հունվարին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը», ինչպես նաև Նախարարների խորհրդի մոտ չորս տասնյակ որոշումները [1-10]: Ըստ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածի՝ «Գյուղատնտեսական գործունեությունը գյուղատնտեսական մքերքների ապրանքային» (ընդգծումը մերն է – Ա. Գ.) արտադրությունն ապահովող տնտեսավարման ձև է: Հայաստանում գյուղատնտեսական գործունեության կազմակերպման ձևերը հիմնվում են քաղաքացիների, կոլեկտիվ և պետական սեփականության վրա և հանդես են գալիս գյուղացիական տնտեսությունների, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների, պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների ձևերով»: Ըստ օրենքի երկրորդ հոդվածի՝ «Գյուղացիական տնտեսությունը քաղաքացիների սեփականության վրա հիմնված գյուղատնտեսական մքերքների ապրանքային արտադրությունն ապահովող ինքնուրույն կազմակերպական միավոր է: Օրենքով նախատեսված կարգով յուրաքանչյուր ընտանիք (ծուխ) իրավունք ունի որպես սեփականություն ստանալու հողամաս» [1, 67-68]: Լուծարվող տնտեսությունների (կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների) հիմնական միջոցները (անասնագլխաքանակ, անասնապահական շինություններ, այլ կառույցներ և գյուղատնտեսական տեխնիկա) կոլեկտիվի անդամների ժողովի որոշման առկայության դեպքում նույնպես վաճառվում էին կոլեկտիվի անդամներին: Անասնագլխաքանակի վաճառքի դեպքում սահմանվում էր նվազագույն քանակություն՝ իինգ գլուխ խոշոր եղջերավոր և 20 գլուխ մանր եղջերավոր անասուն [1; 10]:

Սահմանափակվելով վերոնշյալ օրենքների և որոշումների դրույթների մեջքերումով, փորձենք ներկայացնել այն հիմնական թերութ-

11
90561



յունները, որոնք առկա էին արդեն 1991թ., վերափոխումների իրականացման առաջին փուլում.

ա) *Տարրերակված մոտեցման բացակայություն:* 1970-80-ական թթ. դեռևս հաղթահարված չէր շրջանների, գյուղերի զարգացման անհամամասնությունը: Գյուղատնտեսության զարգացման առանձնահատկություններն իրենց կնիքն էին դրեւ ինչպես գյուղական բնակչության կառուցվածքի, այնպես էլ գյուղատնտեսական զբաղմունքների համակարգի վրա: Հողային ֆոնդի բաշխման, հողահանդակների մասնատվածության, մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսական նշանակության հողերի տարրերությունները նույնպես կարևոր նշանակություն ունեին և պետք է հաշվի առնելին վերափոխումների իրականացման ընթացքում: Նույն խնդիրներն էին առկա նաև անասնագլխաքանակի բաշխման ժամանակ: Սահմանված նվազագույն քանակությունը՝ հինգ գլուխ խոշոր և 20 գլուխ մասն եղջերավոր անասուն, չէր արտացոլում հանրապետության գյուղերի մեծ մասում անասնապահության առկա հնարավորությունները: Ավելին, գյուղացիության զգալի մասը, չունենալով անասունների խնամքի համար համապատասխան տնտեսական կառույցներ, հրաժարվում էր սահմանված քանակությունից: Այս իրողությունն արտահայտվեց արդեն գործընթացի սկզբում, երբ տնտեսությունների մեծ մասը, չունենալով համապատասխան տեղեկատվություն, չօգտագործեց անասնագլխաքանակի ծեռքբերման իր իրավունքը: Այն, որ անսունների սեփականաշնորհումը տեղի ունեցավ լուրջ թերություններով, առանց վերահսկման համապատասխան մնխանիզմների կիրառման, վկայում է 1992-1993թթ. զանգվածային մորքը, որն էապես վտանգեց անասնապահության զարգացումը: Եթե 1986թ. հանրապետությունում կար 860.7 հազար խոշոր եղջերավոր անասուն, որից՝ 319.3 հազար կով և 1902.8 հազար ոչխար ու այծ, ապա 1995թ. հունվարի դրությամբ այդ թիվը կազմեց 503.7 հազար, որից 276 հազար կով և 636 հազար ոչխար ու այծ, 1999թ. դրությամբ՝ խոշոր եղջերավոր 509.6 հազար գլուխ, այդ թվում կով՝ 277.8 հազար, մասն եղջերավոր անասուն՝ 578.8 հազար: Խոշոր եղջերավոր անասունների զիսաքանակը պակասել է 42 %-ով, իսկ մասն եղջերավորներինը՝ ավելի քան երեք անգամ: Նույնը կարելի է ասել նաև գյու-

դատնտեսական նշանակության շինությունների և տեխնիկայի վաճառք-սեփականաշնորհման մասին:

բ) Պետությամ դերի և հիմնական գործառույթների հստակեցման բացակայություն.

Գյուղատնտեսությունում իրականացված վերափոխումները նախորդեցին տնտեսության այլ ճյուղերում իրականացված փոփոխություններին, ինչը, բնականաբար, առաջացրեց բազմաթիվ բարդություններ՝ կապված գյուղմթերքների իրացման, գյուղատնտեսական աշխատանքների ամբողջական ցիկլի կազմակերպման հետ: Չհստակեցվեցին նաև պետության հիմնական գործառույթները, գյուղացի-պետություն փոխադարձ իրավունքների և պարտավորությունների համակարգերը: Արդյունքում, «պետությունը հողը տվեց գյուղացն և մի կողմ քաշվեց, ոչ մի քանի մասին չի մտածում»*:

գ) Ազգագրական տեսամնյութից կարևոր նշանակություն ունի այն, որ հաշվի չառնվեցին նախընթաց զարգացմամբ պայմանավորված իրողությունները: 1970–80-ական թթ. ձևավորվել էր այնպիսի իրավիճակ, երբ տարբեր գյուղերում, սոցիալ-մասնագիտական, սեռատարիքային խմբերի մոտ տարբեր էր ոչ միայն գյուղատնտեսական զբաղմունքների նկատմամբ ձևավորված վերաբերմունքը, այլ դրանցից ստացվող եկամտի տեսակարար կշիռն ընտանեկան բյուջեում:

Հանրապետության որոշ գյուղերում ձևավորվել էին արտագնացության կայուն ավանդույթներ, և, բնականաբար, ավելի կարևոր էին հենց դրանից ստացվող եկամուտները [20; 23]: Արարատյան դաշտի՝ Երևանին մերձական, ինչպես նաև հանրապետության այլ արդյունաբերական կենտրոններին մոտ գտնվող գյուղերում, հատկապես երիտասարդության համար, ավելի կարևոր նշանակություն ունեին արտադրությունում աշխատանքից ստացվող եկամուտները: Հաշվի չառնվեցին նաև գյուղերում սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ձևավորման գործընթացները:

Ակնհայտ է, որ սոցիալ-մասնագիտական և սեռա-տարիքային տարբեր խմբերը չեն կարող նմանատիպ մոտեցումներ ունենալ վերափոխումների հանդեպ, քանի որ տարբեր էին տնտեսական շահե-

* Այս կամ մոտավորապես այսպիսի ձևակերպումներ տրվել են հանրապետության բազմաթիվ գյուղական բնակավայրերում:

բը, գյուղատնտեսության, կոլեկտիվ և պետական տնտեսությունների հանդեպ ծևավորված վերաբերմունքը: Այս դեպքում կարևոր էին նաև տասնամյակների ընթացքում ավանդույթի ուժ ստացած մոտեցումներն ու տեսակենտները: Խորհրդային համակարգը, չնայած նրանում առկա թերություններին, ապահովում էր անհրաժեշտ նվազագույն կենսամիջոցներ: Դիտարկման այս մակարդակում գյուղացիության կողմից չեր առաջադրվում վերափոխումների իրականացման խնդիր, քանի որ ծևավորվել էր որոշակի կայուն վիճակ: Երաշխավորված նվազագույնը խորհրդային համակարգի կարևոր առավելություններից էր, ուստի կտրուկ հրաժարումը դրանից վտանգում էր ոչ միայն տասնամյակների ընթացքում կայունացած տնտեսական, այլև հասարակական, մշակութային հարաբերությունները: Այս և գյուղի վիճակը պայմանավորող բազմաթիվ այլ գործոնները հաշվի չառնվեցին հանրապետության դեկավարության կողմից, և 1991թ. սկսվեց զանգվածային սեփականաշնորհումը:

Տնտեսական վերափոխումների իրազործումը

Այս ենթաքածնում կմերկայացվեն գյուղացիության տարրեր սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական խմբերի վերաբերմունքը պայմանավորող գործոնները. հիմնական ուշադրություն դարձնելով ազգագրական տեսանկյունից կարևոր առումներին: Կառանձնացվեն վերափոխումների հիմնական ոլորտները՝ հողի սեփականաշնորհում, անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղատնտեսական նշանակության կառույցների վաճառք-սեփականաշնորհում:

Առանձնացված բոլոր ոլորտներում սեփականաշնորհման ժամանակ կարևոր նշանակություն են ունեցել ոչ միայն գյուղի տնտեսական զարգացման վիճակը, մասնագիտացման գործոնները, այլև սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական, ունեցվածքային խմբերի վերաբերմունքի և մոտեցումների հետ կապված բազմաթիվ հարցեր. որոնք վերջին հաշվով, պայմանավորել են մեկնարկային հնարավորությունները:

Մեկնարկայիմ հմարավորություններ ասելով՝ նկատի ունենք սեփականաշնորհմանը գյուղացու (ընտանիքի) մասնակցությունը պայմանավորող գործոնների ամրողությունը:

Հոյի սեփականաշնորհում - հոյի սեփականաշնորհմանը գյուղացիության տարբեր խմբերի մասնակցությունը պայմանավորող գործոնները բազմաթիվ են: Տնտեսական կտրվածքում դրանք կապված են գյուղատնտեսական գործունեության արդյունավետության, տարբեր գրադարձներից ստացվող եկամուտների հետ: Ընտանիքի առումով արդեն կարևոր դեր են խաղում սոցիալ-մասնագիտական կազմը, գրադարձներից հետ կապված խնդիրները:

Չնայած գործոնների այս բազմազանությանը, 1991թ., սեփականաշնորհման ինտենսիվ քարոզության պայմաններում*, գյուղական բնակչության մեծ մասի մոտ արտահայտված է եղել հոյի սեփականատեր դառնալու ցանկությունը: Այդ ցանկությունը որպես գերակա ընդունելով հանդերձ, նշենք, որ այն ունեցել է ներքին տարրերակումներ: Դրանք կարելի է ընդհանրացված ձևով խմբավորել հետևյալ կերպ՝ ա. վերափոխումների փուլայնությունն ապահովելու և բ. դրանք գյուղատնտեսության բոլոր ճյուղերում միաժամանակ իրականացնելու կողմնակիցները: Առաջինի կողմնակիցները եղել են հիմնականում մեծահասակները, կոլեկտիվ և խորհտնտեսություններում ընդգրկվածները: Նրանց մեծ մասը, կողմ լինելով հոյի սեփականաշնորհմանը, առաջարկել է տարրերակներ, որոնք կընձեռեին տնտեսավարման նոր ձևերի ու եղանակների աստիճանական ամրագրման հնարավորություններ:

Դրանք վերջին հաշվով հանգում էին հետևյալին՝ կամ ընտրվում են առանձին շրջաններ, որտեղ իրականացվում են փորձնական վերափոխումներ և որոշ ժամանակ անց տարածվում ողջ հանրապետությունում, կամ վերափոխումներն իրականացվում են առանձին ճյուղերում: Առաջին հերթին սեփականաշնորհվում են այն հոդատա-

* Բազմաթիվ գյուղերում արձանագրվել են «վերեկց» միջամտության դեպքեր: Այսպես, եթե կոլեկտիվի անդամների ժողովն ընդունել է կոլեկտիվ տնտեսության պահպանման որոշում, գյուղ կամ շրջան է գործուղվել ՀՀ ակտիվիտեներից մեջ, որի նպատակը եղել է սեփականաշնորհման ապահովելը: Այս փաստը նշում էին ինչպես գյուղացիները, այնպես էլ նախկին և ներկայիս պաշտոնյաները, որոնք խոստովանում էին, որ եղել է զանգվածային սեփականաշնորհման իրահանգ [14; 15; 16]:

րածքները, որոնք թույլ են տալիս դրանք մշակել առանձին ընտանիքների ջանքերով (այգիներ, փոքր վարելահողեր) [14]: Հետազայտմ, երբ ապացուցվում է տնտեսավարժան նոր եղանակների արդյունավետությունը, վերափոխումներն ընդունում են զանգվածային բնույթ և իրականացվում են օյուղատնտեսության բոլոր ճյուղերում: Այս մոտեցման կողմնակիցների մեջ եղել են նաև պետական պաշտոնյաներ, կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների ղեկավարներ, որոնք ունեցել են հիմնականում եղած հնարավորությունները պահպանելու շահագրգովածություն:

Երկրորդ մոտեցման կողմնակիցները եղել են երիտասարդները, որոնց մոտ գերիշխել է արմատական վերափոխումներ իրականացնելու ձգտումը*:

Նյութի ներկայացման միակողմանիությունից խուսափելու համար վաստենք, որ նաև առանձնացված խմբերի ներսում դրսելորվել են որոշ տարրերություններ: Այսպես, որոշ մեծահասակներ, որոնք ունեցել են անրավարարվածության զգացողություն կոլեկտիվ կամ պետական տնտեսությունում իրենց աշխատանքի արդյունքներից, նույնպես կողմ են եղել արագ և զանգվածային սեփականաշնորհմանը: Երիտասարդների մի մասն էլ առաջարկել է խորհրդայինը պահպանելու տարրերակներ: Մոտեցումների նման բազմազանությունը, մեր կարծիքով, արտացոլում է երկու կարևոր իրողություն: Առաջինն այն է, որ արմատական վերափոխումներն անսպասելի էին օյուղացիության մի մասի համար և, վերջիններս, փուլային տարրերակներն առաջարկում էին իրենց վերաբերմունքը վերջնականապես հստակեցնելու համար: Եվ երկրորդը, չնայած հողի սեփականատեր դառնալու փաստի հանդեպ դրական վերաբերմունքին, այնուամենայնիվ կար որոշակի մտավախություն՝ կապված գործընթացի հաջողության

* Երիտասարդների ակտիվությունը պայմանավորված է եղել նաև Արցախյան շարժման հետ կապված ոգևորության և հակադրության «օտար-յուրային» առանցքում օտար-խորհրդայինին բացասական որակներ վերագրելու հետ: Որպես արագ և արմատական վերափոխումների կողմնակիցներ գյուղերի մեծ մասում նշում էր նաև կոմունիստական նոմնելլատուրան կամ դրա մի մասը (ինչպես երևում է, կոմունիստական վերնախավը երկինքիված էր և չուներ միասնական դիրքորոշում), որն ուներ առավելագույն օգուտ ստանալու շահագրգովածություն: Այս դեպքում երկու խմբերի շահերի հաճնելմելը ունի տարրեր հիմնավորում: Երիտասարդության ակտիվ հատվածի համար՝ իշխանության հաստատում, կոմունիստական վերնախավի համար՝ տնտեսական հնարավորությունների ամրապնդում:

հետ: Այս դեպքում կարեոր է այն, որ խորհրդային տնտեսական համակարգի արմատական վերափոխումների գաղափարը դեռևս հասունացած չէր, չնայած զյուղական բնակչության մի մասի մոտ դիտվող անբավարրվածությանը:

Չշարունակելով նյութերի մեջբերումը, նշենք, որ հանրապետությունում ի վերջո հաղթեց երկրորդ՝ վերափոխումները բոլոր ճյուղերում միաժամանակ իրագործելու ձգտումը: Գյուղացիությունը, դրանից ելնելով, ձեռնամուխ եղավ հողի սեփականաշնորհմանն ու անասնագլխարանակի, տեխնիկայի ու գյուղատնտեսական նշանակության կառույցների վաճառքին իր մասնակցությունը կարգավորելուն:

Հանրապետության գյուղերի ճնշող մեծամասնությունում արդեն 1991թ. ձևավորվեցին անհատական կամ կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ¹, որոնք դարձան տնտեսական կյանքի կազմակերպման հիմնական միավորները: Հայատանի հողային ֆոնդը, հետևաբար նաև հողօգտագործման հնարավորությունները, ինչպես նշվեց, էական կախվածության մեջ են գտնվում բնական պայմաններից: 1970-80-ական թթ. գյուղատնտեսության զարգացումն ապահովվում էր հսկայական կապիտալ ներդրումների, ոռոգման համակարգերի կատարելագործման, ոռոգվող հողատարածքների անընդհատ ավելացման ճանապարհով [40, 27-28; 78], սակայն դեռևս վերջնականապես հաղթահարված չէր հանրապետության տարբեր շրջանների զարգացման անհամամասնությունը [78, 25-54]: Հողի սեփականաշնորհումը, ինչպես վկայում են նյութերը, ոչ թե նպաստեց անհամամասնության հաղթահարմանը, այլ ավելի խորացրեց այն:

Բնական է, որ հողային ֆոնդի առանձնահատկությունները պետք է դառնային գյուղերում մեկ ծխին հասած հողաբաժնի էական տարբերությունների պատճառ: Այդպիսիք արձանագրվել են ոչ միայն առանձին մարզերի, այլ հաճախ՝ հարևան գյուղերի շրջանակներում:

¹ Արդեն 1991թ. հուլիսին հանրապետությունում ստեղծվել էր 148.3 հազար գյուղացիական և 24204 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն:

Հանրապետության մարզերում գրառված նյութերը գալիս են հավաստելու ասվածը :

Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանում նույնպես մեկնարկային հնարավորությունները պայմանավորված են տեղային պայմաններով: Նորակերտը «հարուստ» է, որովհետև ունի բերքի հողեր և ոռոգման համակարգ: Մեծ Մասրիկը հարուստ է դարձյալ Նորակերտի համար նշված պատճառներով: Ախարյաձորի համար բացասական դեր է խաղում ճանապարհներից հեռու գտնվելը: Նորակերտի և Մեծ Մասրիկի հարևանությամբ գտնվող և համարյանուն բնակլիմայական պայմաններն ունեցող, Փոքր Մասրիկ փախլստականաբնակ գյուղի «դժբախտության» պատճառը ոռոգման ջրի բացակայությունն է: Կուտականը, որ շրջանի ամենաաղքատ գյուղն է, գտնվում է ճանապարհներից հեռու, սակավահող է և ենթարկվել է ոմբակոծությունների [15; 38]:

Լոռու մարզի Սպիտակի շրջանում արդեն որպես հիմնական բնութագրիչ հանդես է գալիս Աղետի գոտում գտնվելը և ըստ այդմ գյու-

Նորականաձորի շրջանի (Վայոց Ձորի մարզ) Արենի, Շատին, Եղեգիս և Հերմոն գյուղերում սեփականաշնորհումն իրազերձվել է համարյան միաժամանակ: Արենիում սեփականաշնորհվել է 300 հա հողատարածք: Մեկ փայաքածինը կազմել է 1160 քմ քարեվահող, 1040 քմ խաղողի այգի, 1100 քմ պտղատու այգի, 400 քմ խոտաբարք: Շատինում մեկ փայաքածինը կազմել է ընդամենը 1450 քմ: Եղեգիսում մեկ ծովլս ստացել է 2500 քմ հողատարածք, իսկ Հերմոնում՝ մոտավորապես 4100 քմ հողատարածք: Բացի հողաբաժներից չափերից, ընդգծված են այս գյուղերի հողերի որակական տարրերությունները. Արենիում հողաբաժները երկրորդ, երրորդ, չորրորդ կարգի են, Հերմոնում՝ չորրորդ, ինչերրորդ, Շատինում՝ երրորդ, չորրորդ: Արենիում հողաբաժնի մոտավորապես 50%-ը կազմում են խաղողի և պտղատու այգիները, Եղեգիսում մեկ փայաքածինը ընդունացը կազմել է 400 քմ, իսկ խնձորի այգիները սեփականաշնորհվել են միայն տեղացիներին [14]:

Նոյն մարզի Վայրի շրջանում պատկերն այսպիսին է. Բարձրունիում մեկ փայաքածինը կազմել է 1.7 հա վարեկահող և 0.22 հա այգի, Երսում՝ 3 հա, Կեչուտում՝ 1 հա վարեկահող, Զառիքափում՝ 0.48 հա վարեկահող, 0.17 հա ջրովի հող և 0.13 հա խոտաբարք [14]:

Սյունիքի մարզի Գորիսի շրջանում պատկերն այսպիսին է. համեմատարար ունենությունը գյուղեր՝ Տեղ, Քարահունջ, Վերիշեն, միջիմ՝ Կոռնիծոր, աղքատ՝ Սպարանց, Ծինուհայր: Այստեղ նոյնպես գյուղերի դասակարգման մեջ կարևոր դեր են խաղում «առեղային» առանձնահատկությունները: Տեղ գյուղը հարուստ է այն պատճառով, որ թերքի հողատարածքները ունեն և հացառատ է, Քարահունջը՝ որովհետև թթվի այգիներ ունի և վաճառում է հայտնի «Քարահունջի օղին» (2000թ. մեկ լիտր արժեքը 1000-2000 դրամ): Ծինուհայրի դժվարությունների պատճառը մոտավորապես նոյնն է, ինչ Կեչուտինը: Զնայած, որ այստեղ մեկ փայաքածինը կազմում է 1,35 հա, գյուղն ավելի աղքատ է, որովհետև միջև և ԽՍՀՄ փլուզումը գյուղից 550 հոգի աշխատել է «Ունիտնատեխնիկական իրերի գործարանում» և այժմ փաստորեն հայտնվել գործազուրկի կարգավիճակում (Զենարկությունը սեփականաշնորհվել է, դարձել բաց բաժնետիրական ընկերություն և Վերանվանվել «Ծինուհայրի պոլիմերային կողկենեմի գործարան» ԲԲԸ) [15; 19]:

դերի դասակարգման մեկ առանցքը նրանց վերականգնվածությունն է, չնայած դարձյալ կարևոր են բնական պայմանների հետ կայլած բազմաթիվ իրողությունների⁴: Շիրակի մարզում նույնպես արտահայտված են տեղային պայմանների բազմազանության արդյունքում ձևավորված գործոնները⁵:

Ուշագրավ առանձնահատկություններ են դրսերվում ազգային փոքրամասնությունների միջավայրում, որոնց գյուղաբնակ ներկայացուցիչների մեծ մասը մասնակցել է սեփականաշնորհմանը⁶: Սակայն մասնակցությունը պայմանավորված է նաև արտագնացության տրամադրությունների, խորհրդային շրջանում ունեցած գրադարձներով:

Հույների մեջ, օրինակ, գյուղաբնակների տեսակարար կշիռը բավականին ցածր է: Լոռու մարզում նրանք կենտրոնացած են հիմնականում Ալավերդի, Ախրալա, Շամլու քաղաքներում: Վերջին երկուսը խորհրդային շրջանում ունեին բանվորական ավանի կարգավիճակ և դրանց բնակչությունը հողաբաժններ չի ստացել: Ըստսե-

Սպիտակի շրջանի շորս գյուղեր՝ Խնկոյան, Զարաձոր, Սարալսնջ, Նորաշեն, որոնք ամրողությամբ վերականգնվել են մինչև խորհրդային շինարարական կազմակերպությունների հետանալը, Եշվել են որպես շրջանի «հարուստ» կամ «հարստացած» գյուղեր: Շիրականուտում (որը երկրաշարժի էպիկենտրոնն է), ինչպես Շինուհայր, Կեշոտ գյուղերում, տնտեսական ծանր կացության պատճառներից կարևոր է նաև արյունաբերական ձեռնարկությունների անցորդությունը: Սա կարելի է համարել նաև ամքող շրջանի բնորոշ, քանի որ մինչև երկրաշարժը Սպիտակի գյուղական բնակչության բավականին մեծ մասը ընդգրկված է եղել արտադրությունում [44]:

Այսուրյանի շրջանի Երազգավորս գյուղի սակավահողության պատճառն այն է, որ գյուղի լավագոյն հողատարածքները մնացել են Այսուրյանի ջրածարի տարածքում, իսկ Մարմաշենինը՝ որ հողերից 400 հա տրամադրվել է Գյումրիին՝ բաղաքաշինության նպատակով: Ըստ հողաբաժնների չափերի պատկերն այսպիսին է: Սարիար, Կրաշեն՝ մեկ ընտանիքն ունի 7-8 հա հող, Շիրակ, Հացիկ, Կամո՞ մեկ փայտարածինը՝ մոտավորապես 1 հա, Մարմաշեն՝ մոտավորապես 6000 րմ, Երազգավորս՝ 1750 քմ վարելահող և 1000 քմ տնամբեր հողանաս:

*** Եզդի բրդերի ճճող մեծամասնությունը մասնակցել է հոդի սեփականաշնորհման գործերացներին, ինչպես զուտ եղի բրդական, այնպես էլ խաղը բնակչությամբ գյուղերում: Տարբեր գյուղերում հողաբաժնների չափերն այսպիսին են. Արազանունի մարզի Թալինի շրջանի Հակկո, Սորիկ, Դերեկ գյուղերում 1 փայտարածինը կազմել է 3հա, նոյն մարզի Արազանի շրջանի Ռյա-Թազա գյուղում՝ 2հա: Արարատյան դաշտում արդեն սեփականաշնորհկան հողատարածքների չափերը զգալիորեն փոքր են: Եջմիածնի շրջանի Ֆերիկ գյուղում 1 փայտարածինը կազմել է 0.33 հա, Գայ գյուղում՝ 0.5 հա: Պատկերը նոտափրապես նոյնն է նաև Արմավիրի շրջանի Մրգաշատ և Հոկտեմբեր գյուղերում, որտեղ 1 փայտարածինը կազմել է 0.5հա: Շիրակի մարզի Այսուրյանի շրջանում նոյնպես եղի բրդերը մասնակցել են սեփականաշնորհմանը: Ազատան գյուղում, օրինակ, հող ստացել են այսուել բնակվող բոլոր ընտանիքները, (60 ընտանիք) [35]:

ոի միջավայրում, շնայած սեփականաշնորհմանն ունեցած համեմատաբար ակտիվ մասնակցությանը, կարևոր դեր է խաղացել այն, որ արդեն 1991թ.-ից որոշ շրջաններում սկսվել էր արտահոսքը, և այդ պատճառով ավելի քիչ ընտանիքներ են հողաբաժններ ստացել։ Գյուղաբնակ ասորինները նույնպես մասնակցել են սեփականաշնորհմանը։ Արարատի շրջանի Վերին Դվին, Դիմիտրով, Արովյանի շրջանի Արգմի գյուղներում հող ստացել է ասորի ընտանիքների մեծամասնությունը։

Փաստորեն, ազգային փոքրամասնությունների միջավայրում դրսորվում են ինչպես ընդհանրություններ, որոնք բնորոշ են ողջ հանրապետությանը, այնպես էլ առանձնահատկություններ։ Եզրի քրդերն ավելի ակտիվորեն են ներգրավված եղել սեփականաշնորհման աշխատանքներում, ինչը կապված է նրանց միջավայրում գյուղատնտեսական զբաղմունքների ավանդական գերակշռող դերի հետ։

Ուստի շրջանում սեփականաշնորհմանը ակտիվ մասնակցությունը սահմանափակել է արդեն 1991թ.-ից սկսված արտահոսքը, իսկ հոյների միջավայրում՝ վերջիններիս զբաղվածությունը գերազանցապես արդյունաբերական ձեռնարկություններում [35]։

Կարելի է շարունակել օրինակների մեջքերումը, սակայն, կարծում ենք, այսքանը բավարար է բնական պայմաններ-մեկնարկային հնարավորություններ կապը ցույց տալու համար։ Միջին հանրապետական ցուցանիշները նույնպես հավաստում են այս իրողությունը։

* Գեղարքունիքի մարզի Շամբարակ քաղաքում (Նախկին Կրասնոսելսկ քուա) հող ստացել է ընդամենը 83 ուսական ընտանիք։ Լոռու մարզի Տաշիրի և Ստեփանավանի շրջաններում, ի տարբերություն Շամբարակի, ուստի նա ավելի ակտիվորեն են մասնակցել հողի սեփականաշնորհման գործընթացներին, քանի որ այստեղից ուսւ ազգաբնակչության արտահոսք ավելի ուշ է սկսվել։

ՀՀ ազգային փոքրամասնություններին վերաբերող նյութը գրառվել է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայկական Մասնաճյուղի կողմից ֆինանսավորված «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր» ծրագրի շրջանակներում (Ծրագրի ղեկավար՝ Յու. Ի. Սկրտումյան)։ Գրադել են բուրդ-եզրիներին, ուստի նույնականացնելու համար առաջին վերաբերող նյութեր՝ Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերում։

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում հետազոտական ծրագրի ղեկավար Յու. Ի. Սկրտումյանին, խմբի ամելամներ Ի. Վ. Դողենելյանին, Կ. Վ. Սեղբոսյանին, Հ. Գ. Սարգսյանին, Լ. Ն. Պետրոսյանին, Ա. Գ. Հորոսյանին, Ա. Զ. Թաղևոսյանին՝ գրառված նյութերը տրամադրելու և խորհուրդներով օգնելու համար։

1991թ. մեկ տնտեսությանը միջին հաշվով բաժին էր ընկնում 1.22 հա զյուղատնտեսական հողատեսք, որից վարելահող՝ 0.81 հա և բազմամյա տնկարկ՝ 0.23 հա, 1994թ.՝ 1.26 հա, որից վարելահող՝ 0.9 հա, բազմամյա տնկարկ՝ 0.15 հա, 1995թ.՝ 1.27 հա, որից վարելահող՝ 0.91 հա, բազմամյա տնկարկ՝ 0.15 հա, 1997թ., հունվարին՝ 1.30 հա, որից վարելահող՝ 0.97 հա, բազմամյա տնկարկ՝ 0.15 հա [40, 23-24]: ՀՀ Վիճակագրական վարչության ընտրանքային ուսումնախրության տվյալներով տնտեսությունների ապահովածությունը վարելահողերով տատանվում է 0.36 հա-ի (Արտաշատի շրջան) և 6.32 հա-ի (Աշոցքի շրջան) սահմաններում կամ 1/18 հարաբերությամբ: Ընդ որում, տնտեսությունների գերակշռող մասի հողերը բաժանված են երկուսից չորս հողակտորների, այսպիսով նույնիսկ միջին հողաբաժինը կկազմի շուրջ 430 քմ [40, 23-24]:

Անասունների վաճառք-սեփականաշնորհման ոլորտում տարրերություններն ավելի ընդգծված են: Ի տարրերություն հողի սեփականաշնորհման, գրեթե բոլոր զյուղերում բավականին մեծ է անասուններից հրաժարված ընտանիքների տոկոսը:

Անասունների սեփականաշնորհման ժամանակ անհավասար մեկնարկային հնարավորությունները պայմանավորել են տարրեր գործուները: Դրանցից կարևորագույնը, ինչպես ցույց են տալիս գրառված նյութերը, կապված է պետական մթերումների՝ օրենքով սահմանված կարգի և չափարաժինների, ինչպես նաև զյուղական միջավայրում օրենքի այս դրույթի ներկայացման հետ: Ըստ օրենքի, մթերում կատարվելու էր նախորդող հինգ տարիների միջին ցուցանիշները հաշվի առնելով: Եթե նկատի ունենանք, որ դրանք հաճախ ուուճացված էին, հասկանալի կդառնա զյուղացիների այն մտավա-

* Արենիում անասուն ստանալու դիմում տվել է ընդամենը 18 ընտանիք: Արյունքում 600 զլուխ խոչը եղջերավոր անասունից 392-ը կենտրոնացել է մեկ հոգու ձեռքում: 170 տնտեսություն ունեցող Եղեգիսում մանր եղջերավոր անասուն ստանալու համար եղել է 50, իսկ խոչը համար՝ 32 դիմում: Հերմոնում մանր եղջերավոր անասուն ստացել է 42, իսկ խոչը՝ 24 ընտանիք: 103 տնտեսություն ունեցող Ախարաձեռում անասուն վեցցրել է 17 ընտանիք, Զարիքավորում՝ ընտանիքների 40-45%-ը: Պատկերը նոյնն է նաև ազգային փորձառանությունների միջավայրում: Եղիյ բրդական զյուղերում նշվում էր, որ բնակչության մեծ մասը հրաժարվել է անասուններից, քանի որ դժվար է եղել անասնազիւսաքանակը նիսանգամից հաշակալիլուն ավելացնելը: Անասնազիւսաքանակի բաժանման ուշագրակարքարերակ է կիրառվել Ազատան զյուղում, որտեղ անասունների սեփականաշնորհմանը սկսվել է միայն 1992թ.: Անասնազիւսաքանակը բաժանվել է տնտեսությունների ընդիանուր բվի վրա և արյունքում յուրաքանչյուր ընտանիքի հասել է մեկ կով և մեկ հորը:

խությունը, ըստ որի պետական մթերում կատարելու դեպքում իրենց համարյա եկամուտ չէր մնալու: Նորի կողմնակիցների, անասուններ վերցնելու շահագրգուվածություն ունեցող անձանց կողմից օրենքի այս դրույթն անընդհատ շեշտվում էր և արդյունքում դարձավ գյուղացիների մեծ մասի՝ անասնագլխաքանակից հրաժարվելու հիմնական պատճառ: Այս դեպքում ոչ երկրորդական դեր էր խաղում այն իրողությունը, ըստ որի, նոր պետությունը շարունակում էր նոյնացվել խորհրդային պետության հետ, և բնակչության մեծ մասի կարծիքով պետական մթերումներն անպայման կատարվելու էին, որովհետև այդպես էր սահմանել պետությունը^{*}: Հաջորդ պատճառը, որը պայմանավորել է անասուններից հրաժարված ընտանիքների մեծ թիվը, կապված է օրենքով սահմանված նվազագույն քանակության հետ: Միանգամից 5 գլուխ խոշոր և 20 գլուխ մասր եղջերավոր անասուն վերցնելու հնարավորություն ունեցել են ոչ բոլոր ընտանիքները: Ավելին, հաճախ գյուղերում այդքան անասուն չի եղել և ըստ եւթյան, օրենքի այդ դրույթն արդեն կանխորշել է, որ բազմաթիվ ընտանիքներ չեն կարողանալու իրացնել անասուն վերցնելու իրենց իրավունքը: Տարբեր գյուղերում արտահայտված է եղել նաև փոխազման որևէ տարբերակի շհամածայնելու իշխանավորների ցանկությունը: Այսպես, բազմաթիվ գյուղացիներ առաջարկել են անասունների՝ ըստ ընտանիքների քանակի քաժանման տարբերակը, սակայն իշխանավորները մատնացույց են արել օրենքի այս դրույթը^{**}:

Հանրապետության տարբեր շրջաններում անասնապահության գարգաման առանձնահատկությունները հաշվի չառնելը նոյնացես դարձել է անասնագլխաքանակի անարդարացի բաշխման պատճառ: Հարթավայրային գոտում բազմաթիվ ընտանիքներ չեն ունեցել համապատասխան անասնապահական շինություններ և նաև այդ պատճառով են հրաժարվել անասուններ վերցնելուց: Անասնապա-

* Պատահական չէ, որ 1994-2000թթ. գրառված նյութերում բազմաթիվ բանասացների կողմից շեշտվում էր այն հանգամանքը, որ եթե խանային, որ պետությունն ամեն ինչ բարձրողի է մատնելու, անպայման անասուններ կվերցնեին: Նրանք, ովքեր անասուններ վերցրեցին, հետազայտ շկատարեցին իրենց պարտավորությունները, իսկ անասունների մեծ մասը վաճառվեց:

** Ազգագրական տեսանկյունից ուշագրավ է այն, որ որոշ գյուղերում, այնուամենայնիվ, մշակվել են անասունների ծեղքերման տարբերակներ: Հաճախ ներքին համածայնությամբ անասուն վերցրել է մեկ ընտանիք, հետազայտ անասունները բաժանվել են ըստ պայմանավորվածության:

հական շինությունների հետ կապված բարդություններ արձանագրվել են նաև նախալեռնային ու լեռնային գոտիների գյուղերում: Կարելոր է նաև, որ անասնապահական շինությունների մեծ մասը հիմնականում վաճառվեց մեկ կամ մի քանի հոգու, և գյուղացիները չունեցան նաև այս ճանապարհով անասնապահական շինություններն ընդարձակելու հնարավորություն: Այս և բազմաթիվ այլ առանձնահատկությունները հաշվի չառնելու արդյունքում կատարվեց անասնագլխարանակի մեծ մասի կենտրոնացում մեկ կամ մի քանի հոգու ծեռքում: Ըստ վիճակագրական տվյալների, մեկ գյուղացիական տնտեսությանը հասնում է 0.7 գլուխ խոշոր և 1.6 գլուխ մանր եղջերավոր անասուն:

Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացին գյուղացիական տնտեսության մասնակցությունը պայմանավորող գործոնների դիտարկումը քույլ է տակիս ընդհանրացնել անհավասար մեկնարկային հնարավորությունները պայմանավորող տարբեր պատճառները:

Դրանցից առաջինը կապված է գյուղական բնակավայրերի զարգացման անհամամասնության, տնտեսական տարրեր հնարավորությունների հետ: Արարատյան դաշտում, որտեղ կենտրոնացած է հանրապետության գյուղական բնակչության մեծ մասը, հողատարածքները շատ ավելի փոքր են, քան նախալեռնային ու լեռնային գոտիների բազմաթիվ գյուղերում:

Այս կտրվածքում սեփականաշնորհումը, որի ժամանակ հաշվի չառնվեցին գյուղական բնակչության կառուցվածքային առանձնահատկությունները, ունեցավ ուղղակի ազդեցություն և արդեն 1991թ. սահմանափակեց բազմաթիվ ընտանիքների տնտեսական հնարավորությունները: Արարատյան դաշտի գյուղերում, որտեղ ավելի բարձր էր նաև երիտասարդության տեսակարար կշիռը, ընտանիքն ստացավ մի քանի անգամ փոքր հողակտոր, քան այլ գոտիներում: Հաշվարկը մեկ շնչի հաշվով կատարելու դեպքում տարբերություններն ավելի արտահայտված են դառնում: Եթե դրան ավելացնենք տարիքային տարրեր խմբերի՝ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման հնարավորություններն, ակնհայտ է դառնում, որ օրենսդրորեն ձևակերպված սկզբունքներն ի սկզբանե հաշվի չեն

առնում բազմաթիվ առանձնահատկություններ: Լեռնային գոտում երկու կամ երեք անձից բաղկացած ընտանիքը ստացավ երկու-երեք և ավելի հա հող, մինչդեռ Արարատյան դաշտում յոթից ինը անձից բաղկացած ընտանիքը ստացավ երկու-երեք անգամ ավելի պակաս: Իհարկե, այս դեպքում պետք է հաշվի առնել նաև տարբեր կարգի հոդերի եկամտաքերության խնդիրները, քանի որ Արարատյան դաշտում մեկ հա-ի հաշվով ավելի բարձր եկամուտ է ստացվում: Սրան պետք է ավելացնել նաև տեխնիկական ապահովածության հարցերը: Եթե Արարատյան դաշտում փոքր հողակտորները հնարավոր և մշակել առանց տեխնիկայի, ապա նախալեռնային ու լեռնային գոտիներում այս հնարավորությունը բացակայում է:

Փաստորեն, տեղական առանձնահատկությունների անտեսման պատճառով էլ սեփականաշնորհման հենց սկզբում զյուղերը, նաև՝ ընտանիքները հայտնվում էին անհավասար մեկնարկային պայմաններում: Առանձին զյուղերի հնարավորությունների վրա ազդում էին նաև մասնագիտացման հետ կապված գործոնները: Նյութերը ցույց են տալիս, որ հատկապես 1991թ. բարվոք վիճակում էին հայտնվում այն զյուղերը, որտեղ սեփականաշնորհված հողատարածքներում բարձր էր այգիների տեսակարար կշիռը:

Երկրորդ գործոնը ընդհանուր տնտեսական է և կապված է տնտեսական վերափոխումների ողջ համալիրի հետ: Գյուղատնտեսական գործունեության կազմակերպումը, անկախ նրա հիմքում ընկած սկզբունքներից, պայմանավորված է նաև իրացման հնարավորություններով: Խորհրդային շրջանում կար հանակարգ, որի շրջանակներում կազմակերպում էր իրացումն ու ապահովում զյուղատնտեսության պարզ կամ ընդլայնված վերարտադրությունը: 1991թ. սկսված վերափոխումները նախորդեցին տնտեսության այլ ճյուղերի վերափոխումներին, և խախտվեց շուկայական տնտեսությանը համալիր անցման տրամաբանությունը: Հողի մասնավոր սեփականության պայմաններում սպասարկող ենթակառուցվածքները, վերամշակման ձեռնարկությունները մինչև 1995թ. մնում էին պետական: Միաժամանակ, պետությունն ակտիվորեն սահմանափակում էր իր մասնակցությունը տնտեսության ոլորտում, ինչը չէր կարող բացասական ազդեցություն չունենալ զյուղատնտեսության զարգացման

լներացքի վրա: Որպես շուկայական հարաբերություններին անցման «առաջնեկ» հանդես եկած գյուղը միանգամից զրկվեց պետական աջակցությունից, համապատասխան աջակցություն չստանալով նաև տնտեսության այլ ճյուղերի կողմից:

Երրորդ գործոնն արդեն կապված է գործընթացի իրագործման հետ: Սեփականաշնորհման գործընթացը «քաղաքականացված» էր: Օրենքի ընդունումից մեկ-երկու ամիս անց ողջ հանրապետությունում սկսվեց զանգվածային սեփականաշնորհումը: Այս հապեճապությունը գյուղացուն չտվեց վերափոխումների հանդեպ համապատասխան վերաբերմունք ձևավորելու հնարավորություններ: Մեկ-երկու ամսում պետական կառույցները չեն կարող ապահովել գյուղացուն սեփականաշնորհման մեխանիզմների հետ ծանրացնելու գործընթացը: Արդյունքում գյուղը (գյուղացին) միանգամից բախվեց սեփականաշնորհման անխուսափելիության փաստին և հաճախ հարկադրված դարձավ հողի սեփականատեր, քանի որ, ըստ գրառված նյութերի, պետական մարմինները բազմիցս հաշվի չեն նստել կոլեկտիվի կարծիքի հետ: Գյուղատնտեսության զարգացման վրա բացասական ազդեցություն ունեցավ նաև այն, որ սեփականաշնորհումը բոլոր ոլորտներում իրագործվեց միաժամանակ: Այն, որ հայ գյուղացու մոտ անհատական սեփականատիրական ձգտումներն արտահայտված էին (ընդհանուր եկամտի մեջ տնամերձ տնտեսություններից ստացվող եկամտի բարձր տեսակարար կշիռն ասվածի ապացույցներից և), միանշանակ է: Սակայն տնամերձ հողամասերը կազմում էին լավագույն դեպքում 2-2.5 հազար քմ: Սեփականաշնորհումից անմիջապես հետո հողատարածքներն ավելացան մի քանի անգամ, և առանց տեխնիկայի հնարավոր չեր ապահովել դրանց մշակումը:

Բնական է, որ մեկնարկային հնարավորությունների անհավասարությունը գյուղական միջավայրում պետք է ձևավորեր նաև դրանք մեղմելու, սահմանափակելու տարրերակներ: Կարելի է առանձնացնել նի քանի հիմնական տարրերակ՝ *համայնքային, ազգակցական, խմբային, բիմային*. Առաջինի հիմքում ընկած էր ամբողջ համայնքի կամ նրա անդամների մեծ մասի կարծիքը հաշվի առնելով որոշումներ ընդունելու սկզբունքը: Այն կիրառվում էր հիմնականում ընդհանուր բնույթի խնդիրների ձևակերպման և լուծման ժամանակ:

Երկրորդ տարբերակի դեպքում կարևոր էր արդեն ազգակցական հարաբերությունների կարևորման միջոցով սեփականաշնորհման արդարացիությունն ապահովելու սկզբունքը։ Ուշագրավ է նաև այն, որ տարբեր ազգությունների, որպես սեփականաշնորհման արդարացիության երաշխավոր ընտրված ներկայացուցիչները հաճախ գործել են միայն իրենց ազգության համար առավելություն ապահովելու սկզբունքով^{**}։

Երրորդ տարբերակը խմբայինն է։ Այս տարբերակի հիմքում արդեն ընկած է սոցիալ-մասնագիտական շահերի ու հետաքրքրությունների ընդհանրության սկզբունքը։ Սա կարելի է դիտել նաև որպես խորհրդային շրջանում ձևավորված ավանդույթի շարունակություն, եթե կարևորվում էին սոցիալ-մասնագիտական ընդհանրությունների հետ կապված իրողությունները։

Նյութերը ցույց են տալիս, որ այս տարբերակը նույնապես բավականին լայն տարածում ուներ, ընդ որում հաճախ ավելի արտահայտված կարող էին լինել մեկ խմբի շահերը^{*}։ Խմբային շահերը

* Նման օրինակներ գրառվել են Եղեգնածորի շրջանի Շատին, Գորիսի շրջանի Շինուհայր, Աշոցքի շրջանի Արփենի գյուղերում։ Շատինում «Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման» հանձնաժողովի կազմն ընտրվել է երկու անգամ։ Առաջին հանձնաժողովից զյուղացիները դժգոհել են տնաներձերը վաս շափելու համար, ինչից հետո զյուղի խորհրդի նախագահի զլսավորությամբ ստեղծվել է նոր հանձնաժողով՝ յուրաքանչյուր մեծ ազգատոհմից մեկ հոգի սկզբունքով։ Փոքր ազգատոհմերից հանձնաժողովում ներկայացուցիչներ չեն ընտրվել։ Շինուհայր գյուղում լարված է եղել պայքարը այզիները «պապեմական» սկզբունքով բաժնելու համար, յուրաքանչյուրը պահանջել է իր պապի հիմնած այգուց իրեն հանձնել իր հասանելիքը։ Վեճերը երբեմն վեր են ածվել ծեծկառություն ու արյունահեղության տարբեր ազգատոհմերի ներկայացուցիչների միջև, այս կամ այն ազգության պատեմական այզու սահմանները ճշգրտելու ժամանակ։ Արփենիում նույնապես հանձնաժողովի ընտրության ժամանակ բավականին կարելու դեր է խաղացել ըստ ազգատոհմերի սկզբունքը, ընդ որում մեծ ազգատոհմերին չպատկանողները ճգտել են կանչել այդ ազգություններից երես հոգու ընտրվել հանձնաժողովում։

** Արենի գյուղում բազմաթիվ բանասացներ նշում էին, որ լավագոյն հողակորուները բաժին են հասել գյուղատրիքի նախագահի ազգականներին ու մերձավորներին (դրանք Արփա գետի ափամերձ հատվածներում գտնվող հողերն էին)։ Երազգագիրում գյուղի գրեթե կեսին անասուն չի հասել, քայլ համարյա րոլոր Գրիգորյանները ստացել են, որպիսին նրանցից մեկը գյուղատրիքը քարտուղարն է եղել։ Նույն գյուղում շահել են նաև Մխիթարյանները՝ գյուղատրիքի նախագահի ազգականներ։ Բանասացներից մեկի վկայությամբ «վերաբերմունքը նման երևույթների նկատմամբ բացասական է եղել, քայլ կոնկրետ քայլեր չեն ծեռնարկվել»։ Շատերի կարծիքով սեփականաշնորհումն այնքան հապենապ իրագործվեց, որ պարզապես չկային ընտրություն կատարելու հնարավորություններ։

* Միխանիզմատորներն, օրինակ, համարյա քոլոր գյուղերում համակարծիք են եղել տեխնիկայի վաճառքի հարցում, պահանջելով, որ այն հանձնվի շահագործողներին։ Զարիքափ. Բոնակոր. Արենի գյուղերում վարձակալական հիմունքներով այզիները մշակող ընտանիքները պահանջել են, որ դրանք հատկացվեմ իրենց, կամ իրենց փայտաթինն ավելի մեծ

դրսնորվել են նաև տեղացիներով և փախստականներով քնակեցված գյուղերում, ընդ որում, և փախստականները և տեղացիները, անկախ ներքին տարբերակումներից, հիմնականում հանդես են եկել որպես ամբողջական խմբեր^{**}: Տարբեր գյուղերում արձանագրվել են նաև խմբային շահերի՝ ազգագրական տեսանկյունից ուշագրավ բախումներ^{***}:

Հաջորդ տարբերակը թիմայինն է, որն արդեն ընդգրկում է մասնակիցների ավելի նեղ շրջանակ և որի հիմքում ընկած է մեկ կամ մի քանի հոգու համար առավելագույն շահ ապահովելու սկզբունքը՝ գործնական-պաշտոնական շահերի գերակայությամբ: Մի դեպքում «թիմը» կարող են լինել նախկին նոմենկլատուրայի ներկայացուցիչները, որոնք կարողացան օգտվել խառը կացությունից, մեկ այլ դեպքում՝ նորի կողմնակիցները, որոնք հասան սեփականաշնորհումն իրենց ձեռնուու պայմաններով իրագործելուն: Գյուղական խորհուրդների բազմաթիվ նախագահներ նշում էին, որ պետական և կունկտիվ տնտեսադրյունների ունեցվածքի հաշվառման և գույքագր-

լինի: Խմբային շահերի դրսնորումներ արձանագրվել են նաև անասունների սեփականաշնորհման ժամանակ: Բռնակորում, օրինակ, կողեկտիվի անդամների ժողովը որոշում է ընդունել անասունները միայն կողեկտիվի անդամներին վաճառելու մասին: Ուսուցիչները, զյուղում բնակվող բազմաթիվ այլ ընտանիքներ զրկվել են անասուններ ձեռք բերելու հնարավորությունից:

“ Տեղացի-փախստական հակասությունները կապված են եղել հիմնականում այս կամ այն որրուստ սեփականաշնորհմանն ունենալիք մասնակցության հարցերի հետ: Տեղացիները, հատկապես երեխները մեծամասնություն են կազմել, զգութեան սահմանափակելի փալմրսականների մասնակցությունը անասունների, այդինքների, գյուղատնտեսական տեխնիկա-ի սեփականաշնորհման աշխատանքներին:

Մարմաշենուն դեռևս հանձնաժողովի ընտրության ժամանակ ընդգծված է եղել կոլտրնտեսական-խոպանչի հակասությունը, դրա համար էլ աշխատել են պահպանել կողմերի համանասնությունը: Կոլտրնտեսության ժամանակ էլ հակասությունը նեծ էր: Կոլտրնտեսությունը լավն էր, կոլտրնտեսական ուղավելությունը ուներ: Սեփականաշնորհման ժամանակ էլ կոլտրնտեսական ուղավելությունը պահպանել ուզենամ հող կտամ, ուզենամ՝ չէ: Կոլտրնտեսականները նոյնիսկ ուզեցիլ են լավ հողերի վրա կողեկտիվ տնտեսություն ստեղծել, իսկ շաշխատողներին տալ ով թերթի հողերը: Նրանց մեծ մասը դեմ էր նաև սեփականաշնորհմանը, սկսեցին դիմումներ հավաքել, բայց կարծ տևեց: Հացիկում, Հովունիում, Ազատանում մինչև վերջ էլ չշիմ բողնում, որ սեփականաշնորհիվ: Տերչութիկին (ՀՀԸ Վարչության նախակին նախագահ) բերեցին, որ սեփականաշնորհիվ: Կոլտրնտեսությանը կողմ էր այն զանգվածը, ով շահ ուներ, աշխատել էր, ով որ բոյլ էր, խոպան չէր կարողացել զնալ: Մարմաշենուն, Աղետի գոտու այլ գյուղերում, դրսնորվել է հակասությունների և մեկ օդակ. ըստ օրենքի երկրաշարժից հետո քաղաքից գյուղ վերադարձները ունեին առանց գյուղում գրանցվելու հող ստանալու իրավունք: Կոլտրնտեսականները դեմ են եղել նաև սրան. «ինչու պետք է բաղաքում ապրածին հող հասնի, իմ քրտինքով է ստեղծվել»: Նախկին մարմաշնորհների շահերը պաշտպանել են խոպանչինները, գյուղաբնակ հարազատները:

ման համար ստեղծված լուծարային հանձնաժողովների դեկավարները գույքը իրենց են հանձնել «քերևացնելուց» հետո:

Ամփոփելով, կարելի է փաստել, որ մեկնարկային հնարավորությունների անհավասարության իրողությունն ուներ դրսորման մի քանի մակարդակ՝ զյուղական (համայնքային), սոցիալ-մասնագիտական, ընտանեկան և այլն:

Գյուղերի համար որպես մեկնարկային հնարավորությունները պայմանավորող գործոններ հանդես են գալիս բնական պայմանները, հողային ֆոնդի ծավալները, հողի որակական հատկանիշները, հողօգտագործման հնարավորությունները, ոռոգման համակարգի առկայությունը, ջրովի-անջրդի հողեր, խոտհարք-վարելահող-այգի հարաբերակցությունը: Շանապարհամերձ լինելը որպես գործոն սկզբնական շրջանում էական չէր, սակայն հաջորդող տարիներին այն նույնպես ձեռք բերեց կարևոր նշանակություն՝ ապրանքափոխանակության ծավալների կտրուկ աճի հետ կապված:

Մեկնարկային հնարավորությունները պայմանավորող որոշ գործոններ հանդես են գալիս որպես «տեղային» և քնորոշ են միայն կամ մի քանի զյուղերի, շրջանների: Ընդհանուր հանրապետական որոշ գործոններ, այլ գործոնների անրարենպաստ զուգակցման պայմաններում նույնպես ձեռք են բերում ընդգծված «տեղային» նշանակություն: Փախստականաբնակ, հատկապես խառը քնակչություն ունեցող զյուղերում «տեղային» նշանակություն են ստանում հարմարվելու հետ կապված հարցերը: Սահմանամերձ գոտու համար «տեղային» է այն, որ սահմանի հարևանությամբ գտնվող հողերն անօգտագործելի են արդեն մի քանի տարի: Ազգագրական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև մեկնարկային հնարավորությունների անհավասարությունը մեղմելուն ուղղված փորձերի բազմազանությունը: 1991թ. զյուղացին չունեցավ տնտեսավարման ձևերի՝ օրենքով նախատեսված տարբերակներից ուացիոնալ ընտրություն կատարելու հնարավորություն: Պատճառը ոչ միայն կարճ ժամանակն էր, այլ մասնավոր սեփականության իրավունքի ամրագրման և անհատական զյուղացիական տնտեսությունների ստեղծման հարկադրական եղանակները: Այսպիսի իրավիճակում զյուղացին փորձում էր զյուղում վերջին տասնամյակներին կայունացած (սոցիալ-

մասնագիտական խմբեր՝ ընդհանուր մասնագիտական շահերով և հետաքրքրություններով) և ավանդական (ազգակցական, դրացիական) համակարգերի կիրարկման միջոցով ապահովել սեփականաշնորհման արդարացիությունը։ Նման մոտեցումները ձևավորեցին ազգակցական և խմբային տարրերակներ։ «Թիմային» տարրերակը նույնպես նոր չեր գյուղի համար։ Սակայն 1991թ. «թիմերն» ստացան անձնական շահերի բավարարման առավելագույն հնարավորություններ, քանի որ գյուղը նախապատրաստված չեր արմատական վերափոխումներին։ Ընդ որում, գյուղում ձևավորվեց «թիմերի» երկու տարրերակ։ Դրանցից առաջինն ընդգրկում էր իիմնականում «կրոննիստական նոմենկլասուրայի» ներկայացուցիչներին, որոնք իշխանության լժակների օգտագործման միջոցով մեծ օգուտներ ստացան սեփականաշնորհումից։ Երկրորդ տարրերակն արդեն ընդգրկում էր նորի գաղափարախոսներին, որոնք Արցախյան շարժման հետ կապված ոգևորվածության պայմաններում կարողացան մեծացնել իրենց ազդեցությունը գյուղական միջավայրում։ Նշենք, որ վերը դիտարկված տարրերակները կարող էին հանդես գալ նաև մեկ գյուղի շրջանակներում։ Բերված նյութերում արդեն ցույց տրվեց, որ հաճախակի են եղել նաև տարրեր խմբերի բախումները, կապված տարրեր շահերի հետ։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Արտադրության մշակույթը արդի գյուղում

1991թ. իրականացված վերափոխումների արդյունքում Հայաստանում հիմնականում ձևափորվեց հողօգտագործման և գյուղատնտեսական գործունեության կազմակերպման քառաստիճան համակարգ՝ պետական գյուղատնտեսական ձեռնարկություններ և կոլեկտիվ տնտեսություններ (պետական սեփականություն), անհատական գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ (մասնավոր սեփականություն): Մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված անհատական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների թվաքանակի փոփոխությունն այսպիսին է. 1991թ. հունիս՝ 148.3 հազար գյուղացիական և 24.204 գյուղացիական կոլեկտիվ, 1994թ.՝ 298.1 հազար գյուղացիական և 1.810 կոլեկտիվ, 1995թ.՝ 312.9 հազար գյուղացիական և 124 կոլեկտիվ, 1997թ.՝ 319.3 հազար գյուղացիական, 373 կոլեկտիվ տնտեսություն: Այս տնտեսությունները սեփականության իրավունքով տնօրինում են գյուղատնտեսական հողերի գերակշիռ մասը (93-95%)՝ ավելի քան 452 հազար հա հողատարածություն, այդ թվում՝ 322 հազար հա վարելահող, 355 հազար գլուխ խոշոր եղջերավոր և 668 հազար գլուխ մանր եղջերավոր անասուն [40, 23]:

Գրառված նյութերը ցույց են տալիս, որ չնայած մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված համակարգի այսպիսի արագ ձևափորմանը, այնուամենայնիվ, այն անսպասելի էր գյուղացիության մեծ մասի համար: Հողի սեփականատեր դարձած գյուղացին միանգամից կանգնեց տնտեսական գործունեությունը նոր պայմաններին համապատասխանեցնելու անհրաժեշտության առջև: Դի-

տարկման այս հարբությունում վերափոխումները նորույթ էին գրեթե ողջ գյուղացիության համար:

Խորհրդային տնտեսական համակարգի, հասարակական հարաբերությունների առանձնահատկությունն այն էր, որ ԽՍՀՄ գոյության ընթացքում սահմանափակ էին նորույթների մուտքի հնարավորությունները: Պարտադրվող գաղափարախոսության, համակարգի առավելությունների ինտենսիվ քարոզչության, սոցիալիստական համակեցության հիմնարար սկզբունքների ամրագրման պայմաններում Կոմունիստական կուսակցության վերնախավի և տեղական ներկայացուցիչների (կուսակցական կազմակերպությունների ղեկավարներ) հիմնական գործառույթը ողջ համակարգի նույնական (ըստ վերևից տրված հրահանգների) վերարտադրությունն ապահովելն էր:

Վերարտադրվում էր տնտեսական հարաբերությունների այնպիսի մոդել, որում նվազագույնի էր հասցված գյուղացու ինքնուրույնությունը: Նրա մասնակցությունը հանրային գյուղատնտեսական գործունեությանը ուներ առավելապես մեխանիկական բնույթ: Տնտեսական համակարգի նույնական վերարտադրությունը ենթադրում էր նաև հասարակական հարաբերությունների նույնատիպ վերարտադրություն: Չնայած դրան, նույնիսկ այսպիսի իրավիճակում շարունակում էին պահպանված ու արտահայտված մնալ նախընթաց պատմական զարգացմանը պայմանավորված բազմաթիվ ավանդութային երևույթներ [56; 57, 73-82; 58, 5-12; 59; 63, 500-534; 70]: Օժանդակ տնտեսությունը, բացի ընտանեկան բյուջեի համալրման գործում ունեցած նշանակությունից, կարևոր դեր էր խաղում նաև որպես ժողովրդական հմտությունների, իմացությունների ժառանգումն ապահովող համալիր:

Խորհրդային շրջանին վերաբերող ուսումնասիրություններն ու նյութերը բույլ են տալիս առանձնացնել գյուղացու տնտեսական գործունեության երկու հիմնական մակարդակ՝ մակրո և միջին միջավայր: Մակրոմիջավայրում գյուղացին կոլեկտիվի անդամ էր և ընդգրկված էր հանրային արտադրությունում՝ կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում, արդյունաբերական ձեռնարկություններում, կրթամշակութային հիմնարկություններում: Այս մակարդակի կարևոր դրսերումը, բացի զբաղվածության ապահովումից, նաև կա-

յուն աշխատավարձն էր: Գյուղացին ինքնուրույն չէր, հաճախ կատարում էր իր մասնագիտական հնարավորություններին շիամապատասխանող աշխատանք: Խոսքը գյուղատնտեսական տարբեր զբաղմունքների գուգակցման անհրաժեշտության մասին է: Գյուղատեխնիկական հեղափոխության նորույթների ներդրման, տեխնիկական հագեցվածության աճի պայմաններում չէր ապահովվում նաև դրանց ամբողջական յուրացումը գյուղացիության տարբեր խմբերի կողմից և, բնականարար, նվազում էր գյուղատնտեսական գործունեությունը:

Սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ու ենթախմբերի ձևավորումը նույնական ընթացում էր այս միջավայրում: Գյուղացին չուներ կազմակերպական որևէ բարդություն գյուղատնտեսության ոլորտում, ցանքաշրջանառությունը, տեխնիկական սպասարկումը, իրացումը կազմակերպվում էին պլանային տնտեսության շրջանակներում: Աշխատավարձով, չնայած ցածր լինելուն, կարելի էր հոգալ ընտանիքի հիմնական կարիքները, իսկ ընտանիքից երկու-երեք աշխատող ունենալու դեպքում կային նաև միջինից բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորություններ: Սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ու ենթախմբերի ձևավորումը նպաստում էր նաև համայնքային կյանքի, հասարակական, մշակութային հարաբերությունների աշխուժացմանը: Նշենք, որ դրանց գուգահեռ, շարունակում էին պահպանվել նաև բազմաթիվ բացասական իրողություններ՝ կամայական մասնագիտացում, նյութական հնարավորությունների միամակարդակության հարկադրական պահպանում և այլն: Փաստորեն, մակրոնակարդակում խորհրդային շրջանում դրսերվում էին բազմաթիվ հակասական երևույթներ: Մի կողմից՝ տնտեսության կազմակերպման սկզբունքները չէին նպաստում գյուղատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացմանը, մյուս կողմից՝ նույն սկզբունքներն ընձեռում էին ընտանիքի գոյությունն ապահովելու հնարավորություններ: Ընտանեկան բյուջեի համալրման տարբերակների բազմազանությունն այն կարևոր մեխանիզմն էր, որը գյուղական միջավայրում ստեղծում էր պաշտպանվածության ու ապահովվածության յուրատեսակ մթնոլորտ: Այս մեխանիզմի առկայությունը դառնում էր նաև սոցիալ-մասնագիտական տարբեր

խմբերի պասիվության պատճառ, երբ չին առաջարկվում գործունեության կազմակերպման հիմնական սկզբունքների փոփոխություններ:

Երկրորդ մակարդակի՝ միկրոմիջավայրի տնտեսական արտահայտությունն օժանդակ տնտեսությունն էր: Այստեղ գյուղացին ավելի ինքուրույն էր, իր ցանկությամբ գուգակցում էր անասնապահությունը, երկրագործությունը, այգեգործությունը և կազմակերպում մքերթի իրացումը: Գյուղատնտեսական գործունեության արդյունավետության նվազմանը զուգընթաց, աճում էր օժանդակ տնտեսության դերը, շնայած ընտանեկան բյուջեն ծևավորվում էր հիմնականում աշխատավարձի հաշվին:

Վերափոխումները փոխեցին տնտեսական գործունեության կազմակերպման եղանակները: Սեփականատեր դարձած գյուղացու համար անհրաժեշտ գոյամիջոցների ապահովման կարևոր պայման դարձավ գյուղատնտեսական զբաղմունքները շուկայական հարաբերություններին համապատասխանեցնելը: Առաջին հայացքից արագ լուծելի այս խնդիրն իրականում փոխկապակցված և փոխպայմանավորված բարդ գործուների համալիր է: Արդեն 1991թ. գյուղացին ստիպված էր տնտեսավարել նախկին համակարգի փուլում և այլ ընտրանքային տարբերակների բացակայության պայմաններում: Վերափոխումները ոչ թե ապահովեցին շուկայական հարաբերությունների ծևավորումը, այլ միայն գործընթացի սկիզբ հանդիսացան: Փլուզեց (հաճախ նաև հարկադրաբար կազմալուծվեց) խորհրդային տնտեսական համակարգը: Գյուղացին միանգամից գրկվեց մակրոմիջավայրի ընձեռած հնարավորություններից:

Նյութականում դա արտահայտվեց ընտանեկան բյուջեի ամենակարևոր բաղկացուցչի՝ աշխատավարձի դրամիմամբ: Կատարվեց սոցիալ-մասնագիտական խմբերի ու ենթախմբերի համահարթեցում, և կառուցվածքային տեսանկյունից բազմատարր գյուղացիությունը վերածվեց մեկ մասնագիտական խմբի՝ անհատական կամ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն վարողի: Գյուղատնտեսական տեխնիկայի, կառույցների օգտագործման տեսանկյունից ևս ընտանիքների մեծամասնությունը հայտնվեց անբարենպաստ պայմաններում: Կոլեկտիվում գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտե-

սական նշանակության կառույցների օգտագործման հավասար հնարավորություններ ունեցող գյուղացիները վերածվեցին սպասարկողի (սեփականատիրոջ) ու օգտագործողի: Անասնագոմերն ու այլ շինություններ գնեցին հիմնականում անասնապահները, անասնագրլիարանակի մեծ մասը սեփականաշնորհած անհատները: Գյուղացիների մեծ մասը զրկվեց դրանց օգտագործման հնարավորությունից: Սեփականաշնորհումից ընդամենը մեկ-երկու տարի անց անասնագոմերի, այլ կառույցների մեծ մասն ավերվեց, քալանվեց, շինանյութը վաճառվեց և այլն: Փոքր թվով տնտեսություններ ստացան ընդամենը մի քանի տարի առաջ հանրային համարվող ունեցվածքը տնօրինելու, յուրացնելու հնարավորություն: Տեխնիկայի սեփականաշնորհումից անմիջապես հետո ստեղծված իրավիճակը նույնպես անսպասելի էր գյուղացիության մեծ մասի համար: Ծառայությունների սակագների հետ կապված պայմանագրային պարտավորությունները հիմնականում չգործեցին: Տեխնիկան շահագործողների կողմից սահմանվեցին կամայական սակագներ, անհատական տնտեսությունների սպասարկումը կատարվում էր հաճախ ըստ ցանկության, ինչը, բնականարար, դժգոհությունների ևս մեկ աղբյոր էր գյուղական միջավայրում: Անսպասելի էր նաև այն, որ գյուղացին ստիպված էր վճարել ընդամենը մի քանի ամիս առաջ ըստ էության բոլորի. այդ թվում նաև՝ իր տեխնիկայի օգտագործման համար:

Վերոհիշյալ իրողությունները պայմանավորեցին նաև տնտեսական գործունեության եղանակների ընտրությունը: Խորհրդային համակարգում գյուղացին քաղմագործառութային էր, սակայն սովորաբար գրադարձներից մեկը գերակա էր մյուսների նկատմամբ: Վերափոխումներից հետո այս քաղմագործառութայնությունը պահպանվում է և պայմանավորում արդին միայն գյուղատնտեսական գրադարձների հարաբերակցությունը:

Հայաստանում հողօգտագործման հնարավորությունները կապված են հիմնականում հողային ֆոնդի կտրտվածության, բերրիության և սակավահողության հետ: Սեփականաշնորհումն էլ ավելի մանրատեց հողային ֆոնդը*, իսկ փոքր հողակտորներում գյուղատն-

* Տարբեր գյուղերում կան ընտանիքներ, որոնք ստացել են մեծ քանակությամբ հողակտորներ՝ վեց, յոր, հաճախ նաև ինը և ավելի: Արարատյան դաշտում, որտեղ կարևոր է խաղում քանչարաբռստանային բույսերի ծավակությունը, 1000-1500 ք.մ. հողակտորը կարող է

տեսական աշխատանքների ամբողջական կազմակերպումն արդեն կապված է բավականին լուրջ դժվարությունների հետ՝^{**}:

Հողակտորները հաճախ գտնվում են միմյանցից և զյուղերից բավականին մեծ հեռավորության վրա. ինչն էլ ավելի է դժվարացնում դրանց մշակման հնարավորությունները:

Տնտեսական ընդհանուր համակարգի փլուզման և համարժեք այլընտրանքային տարբերակների բացակայության պայմաններում, զյուղացիությունը հարկադրված փոխում էր տնտեսական գործունեության հիմքում դրվող սկզբունքներն ու չափանիշները: Ընդհանուր (պետական) տնտեսական նպատակահարմարության գործոնը փոխարինվեց անձնական (ընտանեկան), լավագույն դեպքում՝ ազգակցական կամ դրացիական տնտեսական նպատակահարմարության գործոնով. ինչը, բնականարար, շատ ավելի սահմանափակ հնարավորություններ է ընձեռում զյուղատնտեսության զարգացման համար: Ելնելով այս սկզբունքից, զյուղացին (ընտանիքը) կարող է սահմանափակվել միայն կենապահովման զյուղատնտեսությամբ, արտադրելով միայն այն և այնքան, որքան հարկավոր է ընտանիքի գոյության նվազագույնն ապահովելու համար: Տնտեսական գործունեության հիմքում ընկած սկզբունքների փոփոխությունը դառնում է նաև հանրապետության տարբեր մարզերում մշակվող հիմնական բույսերի կամ դրանց տեսակարար կշռի փոփոխության պատճառ:

Փոքր չհամարվել: Սակայն հացահատիկի մշակության կենտրոններում արդեն այս նույն հողատարածքի վրա հացահատիկ ցաները դառնում է աննպատակահարմար: Կապանի շրջանի Դավիթ Բեկ զյուղում կային ընտանիքներ. որոնք ունեին ինը. տասը և ավելի հողակտորներ և չին մշակում դրանց մի մասը. քանի որ հաճախ հողակտորը կազմում էր երկու–երեք հարյուր ք.մ.:

Արարատյան դաշտում, օրինակ նշվում էր, որ շատ ընտանիքներ ստացել են տասը մետր լայնությամբ և 100-200 մետր և ավելի երկարությամբ հողակտորներ, որտեղ տեխնիկա չի մտնում: Բերքահավաքիր շրջանում զյուղացինները ստիպված են այդ տարածության վրա տեղափոխել արկերը կամ պարկերը, ինչը, բնականարար ազդում է աշխատանքի արյունավետության վրա: Այլ շրջաններում որպես ևս մեկ հիմնախնդիր նշվում էր այն, որ միմյանց հարկանությամբ գտնվող հողակտորներում հաճախ ցանվում են տարբեր իննամբ պահանջող մշակաբույսեր. օրինակ՝ զարի և ցորեն: Բանասացներից մեկը նշում էր. «Ես ցորեն եմ ցանել, հարեւան» զարի: Ցորենս ցրում եմ, նրա զարին փշանում է: Չեմ ցրում, ես եմ տուժում, որովհետև ավելի քիչ քեր եմ ստանում: Հաճախ այդ պատճառով առաջանում են վեճեր: Կամ՝ «իմ հողամասի լայնությունը ընդամենք տասը մետր է, երկարությունը հարյուր: Թումարինիկատները ուզում եմ տեխնիկայով շաղ տամ, հնարավոր չէ, որովհետև ընդգրկման շառավիղը 20 մետր է: Ստիպված ծեղողք եմ անում: Կամ՝ փող եմ տախի ջրելու համար: Իսկ ցեղուներն ավելի մեծ շառավիղ են ընդգրկում, քան իմ հողամասն է»: Նման բազմարիվ օրինակներ գրանվել են նաև հանրապետության այլ զյուղերում:

Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ մշակվող բույսերի տեսակները էական փոփոխությունների չեն ենթարկվել ինչպես ըստ շրջանների, այնպես էլ ըստ ուղղաձիգ գոտիականության: Հիմնական փոփոխությունները կապված են ավելի շուտ տարբեր մշակաբույսերի հարաբերակցության հետ:

Արարատյան դաշտի գյուղերը շարունակում են մնալ ջերմասեր բույսերի մշակության հիմնական կենտրոններ: Ավելին, բազմաթիվ տնտեսություններ, հատկապես նրանք, որոնք երկու-երեք փայտածին են ստացել և ունեն անհրաժեշտ աշխատուժ, ավելացրել են այս մշակաբույսերի (լոլիկ, վարունգ, սմբուկ, սեխ, ձմեռուկ և այլն) տարածքները: Նման գյուղերում դրանք ունեն ապրանքային նշանակություն, և ընտանեկան բյուջեում մեծ է դրանցից ստացվող եկամուտների տեսակարար կշիռը: Որոշ մշակաբույսերի ապրանքային նշանակությանը նպաստում են ոչ միայն բնակլիմայական բարենպատ պայմանները, այլև հանրապետության խոշորագույն կենտրոնի՝ Երևանի մերձությունը, ինչը մթերքների բավականին մեծ ծավալների իրացման առավելություն է ընձեռում: Արմավիրի շրջանի գյուղերի համար կարևոր է մեծածախ գյուղատնտեսական շուկայի առկայությունը Արմավիր քաղաքի հարևանությամբ (այս շուկայից են օգտվում նաև Գյումրիի և Վանաձորի վերավաճառողները): Արարատյան դաշտի գյուղերի առավելություններից մեկն էլ այն է, որ Երևան քաղաքում և Արմավիրի ու Արարատի մարզերում են գտնվում մթերող հիմնական ծեռնարկությունները, որոնք, չնայած վճարումների ուշացումներին, գյուղմթերքների բավականին մեծ ծավալներ են մթերում:

Արարատյան դաշտում, ինչպես նաև նախալեռնային գոտու որոշ գյուղերում վերջին տասնամյակում դիտվող հաջորդ փոփոխությունը կապված է այգիների տարածքների կրճատման հետ: Այս երևոյթն ունի տարբեր պատճառներ՝ պահանջարկի անկում, ոռոգման ջրի բացակայություն, ինչպես նաև արտադրանքի մեծ ծավալների մթերման հնարավորությունների բացակայություն: Այգիներից ազատված տարածքները հատկացվում են հիմնականում բանջարաբուտանային բույսերին ու հացահատիկին:

1994թ. հետո, տնտեսական համեմատական կայունացման պայմաններում, բնակչության մի մասը վերականգնում է այդիները, սակայն այս գործընթացը ևս ընթացքի մեջ է և փաստել, որ այն կզերակշղի առաջիկա տարիներին, բավականին դժվար է, քանի որ իրացման հետ կապված ցանկացած տեղաշարժ կարող է դառնալ տնտեսական նախապատվությունների փոփոխությունների պատճառ: Բանջարաբոստանային նշակարույսների տեսակարար կշղի անը պայմանավորված է ոչ այնքան բնակչության զնողունակության մեծացմամբ, որքան վերջին տարիներին զյուղմթերքների վերամշակման ձեռնարկությունների վերագործարկմամբ: Այդիների տարածքների ավելացումը նույնպես հիմնականում կապված է իրացման գործոնի հետ:

Արարատյան դաշտի զյուղերի մեծ մասում դիտվող հաջորդ փոփոխությունը կապված է հացահատիկային բույսերի (հիմնականում՝ ցորենի) ցանքատարածությունների աճի հետ: Նշենք, որ այս պրակտիկան կիրառում են այն ընտանիքները, որոնք մի քանի հողաբաժին ունեն և դրանցից մեկը հատկացնում են ցորենին՝ այսուրի անհրաժեշտ պաշարի մի մասն այս կերպ ապահովելու նպատակով: Նման միտումներ արտահայտված են նաև Արարատյան դաշտում բնակչող ազգային փոքրամասնությունների միջավայրում:

Արարատյան դաշտում վերջին տարիներին որոշ փոփոխություններ են արձանագրվում նաև անասնապահության մեջ: Արարատի, Արմավիրի, Էջմիածնի շրջաններում գրառված նյութերը ցույց են տալիս, որ զյուղացիական տնտեսությունների մի մասի մեջ արտահայտված է անասնագլխաքանակն ավելացնելու ձգտումը, չնայած արոտավայրերի սահմանափակ լինելուն: Մեկ կամ երկու գլուխ խոշոր եղերավոր անասուն պահիվում է ընտանիքը կաքնամթերքով ապահովելու և ավելցուկը վաճառելու նպատակով: Անասունները հիմնականում ողջ տարվա ընթացքում պահիվում են զյուղում մերձակա արոտավայրերում կամ սեփականաշնորհված ու տնամերձ հողամասերում: Անասնապահությամբ զբաղվելը կապված է ոչ միայն արոտավայրերի, այլև ընտանիքում աշխատութիւն առկայության հետ: Բանջարաբոստանային բույսերի նշակությունը և այգեգործությունը աշխատատար զբաղմունքներ են և դրանք անասնապահության հետ

զուգակցելու հնարավորություն ունեն կամ այն ընտանիքները, որոնցում կա անհրաժեշտ աշխատուժ. կամ այնպիսիք, որոնք զբաղվում են միայն տնամերձ հողակտորների ու այգիների մշակությամբ:

Արարատյան դաշտում, տնտեսական գործունեությունը պայմանավորում են ընտանիքի հնարավորությունների և բնակլիմայական պայմանների առանձնահատկությունների հետ կապված գործունեությը: Նպաստավոր աշխարհագրական դիրքը և Երևանի մերձությունը թույլ են տալիս մշակել ապրանքային նշանակություն ունեցող բանջարաբուտանային ջերմասեր մշակաբույսեր, ինչպես նաև զբաղվել այգեգործությամբ: Այլ զբաղմունքները, հատկապես անասնապահությունը, ընտանիքների մեծ մասի համար ունեն օժանդակ նշանակություն: Կարենոր է նաև իրացման հնարավորությունների բազմազանությունը՝ վաճառք Երևան քաղաքում, ապրանքափոխանակություն, մքերում վերամշակող ձեռնարկություններին:

Նախալեռնային և լեռնային գոտիների զյուղերում կատարված փոփոխությունների մեծ մասը նույնապես պայմանավորված է տնտեսական գործուներով: Այստեղ ևս, ինչպես Արարատյան դաշտում, զուգակցվում են տարրեր զբաղմունքներ՝ երկրագործության տարրեր ճյուղեր, անասնապահություն և այլն: Գրառված նյութերը ցույց են տալիս, որ խորհրդային շրջանի համեմատ, այս գոտիներում նույնապես պահպանվել, հաճախ նաև ավելացել են բանջարաբուտանային մշակաբույսերին հատկացվող տարածքները, սակայն Արարատյան դաշտի համեմատությամբ փոխվում է տարրեր մշակաբույսերի տեսակարար կշիռը: Նվազում են լոլիկին, սմբուկին, սեխին, ձմերուկին հատկացվող տարածքները: Ըստ ուղղաձիգ գոտիականության, հատկապես նախալեռնային գոտու զյուղերում, աճում է կարտոֆիլի, կաղամբի, գազարի, լոբու տեսակարար կշիռը: Նշենք նաև, որ այս մշակաբույսերի մի մասը մեկ կամ մի քանի շրջաններում կարող է ունենալ ապրանքային նշանակություն, մյուսներում՝ ընդամենը բավարարել ընտանիքի պահանջմունքները: Խորհրդային շրջանում կարտոֆիլի մշակության «մասնագիտացած» շրջաններն այսօր ել մնում են այդպիսին*: Չնայած նախալեռնային և լեռնային գոտիներում

* Գեղարքունիքի մարզում, Լոռու մարզի Ստեփանավանի և Տաշիրի շրջաններում տնտեսությունների մեծ մասի համար կարտոֆիլի մշակությունն ունի ապրանքային նշանակություն: Այս շրջանները հանդիս են զալիս որպես Երևան քաղաքի և Արարատյան դաշտի բա-

դիտարկվող այս իրողություններին, պետք է արձանագրել, որ Արարատյան դաշտի համեմատությամբ նվազում է քանչարարուստանային ճշակարույսերի ապրանքային նշանակությունը: Բացառություն են կազմում կարտոֆիլը, մասամբ նաև՝ կաղամբը: Այս հանգամանքը պայմանավորված է ոչ միայն բնակլիմայական առանձնահատկություններով, այլև իրացման սահմանափակ հնարավորություններով: Նախկինում որպես իրացման տեղական նշանակության կենտրոններ հանդես եկող քաղաքները՝ Կապան, Գորիս, Սխսիան՝ Սյունիքի մարզում, Վայք, Եղեգնաձոր, Ձերմուկ՝ Վայոց ձորի մարզում, Խջևան, Դիլիջան, Բերդ՝ Տավուշի մարզում, Արքիկ՝ Շիրակի մարզում և քաղմաքիվ այլ քաղաքներ այսօր այդպիսին չեն: Պատճառները տարբեր են: Կենսամակարդակի, հետևաբար նաև գնողունակության կտրուկ անկումը, բնակչության զանգվածային արտահոսքը վերջին տարիներին էապես կրծատել են իրացման ծավալները: Հաջորդ պատճառն այն է, որ քաղմաքիվ քաղաքներում բնակչության մի զգալի մասը համատարած գործազրկության պայմաններում քաղաքային կացութաձևը զուգակցում է զյուղատնտեսական գրաղմունքների հետ: Ըստ ընտանիքներ հողակտորներ են վերցրել կամ քաղաքների մերձակայքում, կամ զյուղերում և դրանց ճշակությամբ ապահովում են քանչարեղենի իրենց պահանջը:

Վերջին տասնամյակում էական փոփոխություններ են կատարվում նաև հացահատիկային բույսերի ճշակության բնագավառում: Ինչպես վերը նշվեց, խորհրդային շրջանում, ինչպես նշվեց, արձանագրվել է հացահատիկային ճշակաբույսերի ցանքատարածությունների նվազում (1988թ.՝ 133.0 հազար հա, իսկ ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 1952թ.՝ 394.4 հազար հա) [12, 272]: ՀՀ Գյուղատնտեսության նախարարության 1998թ. հրատարակած «Հայաստանի Հանրապետության ագրո-պարենային համակարգի 1998-

դարային ու զյուղական այլ բնակավայրերի մի մասի կարտոֆիլի հիմնական մատակարար: Տաշիրի և Ստեփանավանի շրջանների համար որպես սպասարկման գոտի հանդես են զալիս նաև Վանաձոր քաղաքն ու հարևան Վրաստանը: Շիրակի մարզի խոշորագույն կենտրոնի՝ Գյումրիի համար որպես հիմնական մատակարար հանդես են զալիս Ախուրյանի շրջանի զյուղերը: Կարտոֆիլի ճշակության մասնագիտացած շրջանները ապրանքափոխանակության միջոցով որպես մատակարար հանդես են զալիս նաև այլ շրջանների համար: Այս և քաղմաքիվ այլ շրջաններում քանչարարուստանային բույսեր ճշակվում են նաև ընտանիքի պահանջմունքները քավարաբելու նպատակով:

2002թթ. բարեփոխումների» ծրագրում 1991-1995թթ. համար հացահատիկի միջին տարածությունը նշվում է 178.1 հազար հա. իսկ 1995-1997թթ.՝ 186.0 հազար հա [34, 51]: Այգեգործության կենտրոններ համարվող շրջաններում այգիների տարածությունների մի մասը հատկացվում է հացահատիկին: Շիրակի, Արագածոտնի մարզերում նախկինում տեխնիկական մշակաբույսերի տարածություններում այսօր նույնպես հացահատիկ է մշակվում:

Նյութերը ցույց են տալիս, որ հացահատիկի ցանքատարածությունները, չնայած աճի միտումին, փոփոխական են ինչպես ըստ առանձին տարիների, այնպես էլ շրջանների: Ծիշտ է, հացահատիկի մշակության կենտրոններում այսօր ևս այն պահպանել է ապրանքային նշանակությունը, սակայն մեծ ծախսերը, ցածր բերքատվությունը, որոգման բարդությունները, հողակտորների կտրտվածությունը հացահատիկի մշակումը դարձնում են ոչ եկամտաբեր:

Եվ որպես ողջ հանրապետությունը բնութագրող իրողություն պետք է նշել կերային մշակաբույսերի ցանքատարածությունների աննախադեպ նվազումը: 1995-1997թթ. միջին ցուցանիշը կազմել է ընդամենը 101.2 հազար հա, մինչեւ 1988թ. 264.8 հազար հա [12, 272; 34, 51]: Կերային մշակաբույսերի ցանքատարածությունները պակասել են ավելի քան 2.5 անգամ:

Անասնապահության գարգացումը նույնպես պայմանավորված է տարբեր գործուներով: Արարատյան դաշտի գյուղերում կատարված փոփոխություններին մենք անդադարձանք: Նախալեռնային և լեռնային գոտու գյուղերում արդեն աճում է անասնապահության տեսակարար կշիռը, հետևաբար նաև այս զբաղմունքից ստացվող արդյունքի ապրանքային նշանակությունը: Անասնապահությունը, ինչպես ցույց են տալիս գրառված նյութերը, նախալեռնային և հատկապես լեռնային գոտու գյուղերի տնտեսությունների մեծ մասի համար շա-

* Տարբեր շրջաններում Իհա հացահատիկ մշակելու համար պահանջվող մոտավոր գումարը հետևյալն է. սերմացո՞ւ միջինը 30-40 հազար դրամ, ցեղ՝ 5-7 հազար դրամ և 30 լիտր վառնիք, վար՝ 5-7 հազար դրամ և 30-40 լիտր վառնիք, ցանքը՝ 3-5 հազար դրամ և 15-20 լիտր վառնիք. տեխնիկայով ցարանում՝ 2-3 հազար դրամ և 15-20 լիտր վառնիք, հոնը՝ 6-8 հազար դրամ և 30-35 լիտր վառնիք, տեղափոխում՝ 5-7 հազար դրամ և 20-25 լիտր վառնիք: Դրամական արտահայտությամբ ծախսերը տատանվում են 80-120 հազար դրամի սահմաններում: 1 հա-ից 10-15 գենտոներ բերք ստանալու դեպքում զյուղացին հաճախ փոխառություն է միայն կատարված ծախսերը: Ավելի ցածր բերքատվության դեպքում առանձին տարիներին նույնիսկ կատարված ծախսերը փոխառություն չի լինում:

րունակում է հանդես գալ որպես հիմնական զբաղմունք: Սակայն կատարված փոփոխությունները, և հատկապես կերային մշակաբույսերի ցանքատարածությունների էական կրճատումը դժվարություններ են ստեղծում այս ոլրոտում և սահմանափակում անասնագլխարանակն ավելացնելու հնարավորությունները: Չորս-իինգ գլոխ խոշոր եղջերավոր անասուն պահող ընտանիքները պետք է առնվազն ութ-տասը տոննա անասնակեր պաշարեն ձմեռվա համար:

Հյուսիս-արևելյան շրջաններում հիմնական տարրերակը հեռագնա անասնապահությունն է: Անասունները տեղափոխում են գյուղերից բավականին մեծ հեռավորությունների վրա գտնվող ամառանցներ, որտեղ բավականին երկար ժամանակ ապրում են նաև ընտանիքի անդամներից մեկ-երկուաը, հիմնականում մեծահասակները: Շիրակի մարզում նույնական այս պրակտիկան բավականին տարածված է, սակայն այն կիրառում են հիմնականում ֆերմերային տնտեսությունները, որոնք անասունները տեղափոխում են Ամասիայի շրջանում գտնվող արոտավայրեր: Շիրակի մարզում բավականին տարածված է նաև Ամասիայի լրված գյուղական բնակավայրերի տարածքներում խոտհունձ կատարելու և ձմռան համար անհրաժեշտ անասնակերը նաև այս ճանապարհով ապահովելու պրակտիկան: Ախուրյանի, Աշոցքի շրջաններում կան բազմաթիվ ընտանիքներ, որոնք անասնակերը ձեռք են բերում հենց այս ճանապարհով:

Անասնապահության զարգացումը պայմանավորում են նաև մսամբերքների և կարնամբերքների իրացման հնարավորությունները: Տարածաշրջանների մեծ մասում չկան գննան ու մթերման կազմակերպություններ, իսկ քաղաքների շուկաները տնօրինում են հիմնականում վերավաճառողները, որոնք և թելադրում են գները: Այս իրավիճակում որպես իրացման հիմնական տարրերակ հանդես է գալիս փոխանակությունը: Շատ ընտանիքներ մեկ կամ երկու գլոխ անասուն պահում են առաջին անհրաժեշտության սննդամբերքի հետ փոխանակելու նպատակով:

Բնական է, որ կատարված բազմաթիվ ու բազմաբնույթ փոփոխություններն ազդել են նաև տարրեր գյուղական բնակավայրերում, տարրեր ընտանիքների կողմից գյուղատնտեսական գործունեության կազմակերպման հիմնական սկզբունքների վրա: Նյութերը ցույց են

տալիս, որ գյուղերի ճնշող մեծամասնությունում խախտված է ցանքաշրջանառությունը, չեն հերթափոխվում մշակաբույսերը, ինչը հանգեցնում է հողի որակական հատկանիշների անկանությունը: Կան նաև պարարտացման, բունարդիմիկատների օգտագործման հետ կապված բազմաթիվ այլ դժվարություններ: Այսպիսի պայմաններում անհատական գյուղացիական տնտեսությունները մշակում են տարրերակներ, որոնք կտան կենսապահովման նվազագույնն ապահովելու և միաժամանակ հողի որակական հատկանիշների անկումը կանխելու հնարավորություններ: Արարատյան դաշտի գյուղերում, եթե ընտանիքն ունի մի քանի հողակտոր, պարբերաբար փոխվում են մշակաբույսերը: Այս պրակտիկան կիրառվում է նաև նախալեռնային և լեռնային գոտիների գյուղերում, այն տարրերությամբ, որ այստեղ ավելի շատ տարածքներ են քողնվում որպես խոտհարք, ինչը պայմանավորված է անասնապահության ապրանքային նշանակությամբ: Մշակաբույսերի հերթափոխություն կատարում են այն ընտանիքները, որոնք ունեն մեծ հողատարածքներ: Սակավառող գյուղերում նման հնարավորությունները սահմանափակ են և պարբերաբար մշակվում են մեկ կամ երկու մշակաբույս, անտեսելով ցանքաշրջանառության կարգը:

Ավելի փոքր հողատարածքներում գյուղացիական տնտեսությունների մեծ մասը նույնպես փորձում է ինչ-որ տարբերակով կազմակերպել մշակաբույսերի հերթափոխությունը: Գրառված նյութերի հիման վրա կարելի է առանձնացնել երկու հիմնական տարբերակ: Առաջինն այն է, երբ փոխվում է բույսը և յուրաքանչյուր տարի նույն հողատարածքում տարբեր բույսեր են մշակվում, երկրորդը՝ երբ նույն հողատարածքում փոխվում են այս կամ այն մշակաբույսին հատկացվող հողակտորները: Այս պրակտիկայի կիրառումը, ինչպես մեծ հողակտորների դեպքում, դարձյալ կապված է սեփականաշնորհված հողատարածքների չափերի հետ:

Կարենոր է նաև այն, որ որևէ բույսի մշակումը կապված է ոչ միայն հողի որակական հատկանիշների, այլև ոռոգման հետ: Ոռոգվող հողատարածքները սեփականաշնորհումից հետո պակասել են գյուղերի ճնշող մեծամասնությունում: Ըստ այդմ, դրանցում մշակվում են այնպիսի բույսեր, որոնց ապրանքային նշանակությունն ավելի

բարձր է՝ Արարատյան դաշտում բանջարաբոստանային մշակաբույսեր, այլ շրջաններում՝ հացահատիկ, նաև բանջարաբոստանային որոշ մշակաբույսեր (կաղամք, կարտոֆիլ և այլն): Դրանք կարող են նույն հողակտորում մշակվել նաև մի քանի տարի, բնականաբար, ազդելով հողի որակին:

Նշենք նաև, որ ցանքաշրջանառության կազմակերպումը միայն մեկ տնտեսության շրջանակներում առաջացնում է բազմաթիվ բարդություններ և դարձյալ հանդես է գալիս որպես ինտենսիվ գյուղատնտեսության վարումը արգելակող կարևոր գործոն:

Փաստորեն, ըստ գյուղատնտեսական դրսերվող առանձնահատկությունները շարունակում են արտահայտված մնալ նաև այսօր: Վերջին տասնամյակում կատարված փոփոխություններն այս ամենի վրա ունեն երկակի ազդեցություն:

Մի կողմից, գյուղատնտեսական գործունեության կազմակերպման հիմքում ընկած սկզբունքների փոփոխությունը դառնում է պատճառ, որ նախալեռնային և լեռնային գոտիների գյուղերում, թեկուզ փոքր հողատարածքներում, մշակվում են բույսեր, որոնք խորհրդային շրջանում լայն տարածում չեն ունեցել: Նույնը կարելի է ասել նաև Արարատյան դաշտի մասին, որտեղ ավելացել են հացահատիկին հատկացվող տարածությունները: Մեկ այլ դեպքում, տնտեսական նժվարությունները դառնում են պատճառ, որ բազմաթիվ ընտանիքներ հրաժարվեն «ավանդական մշակաբույսերից»: Խոսքը, մասնավորապես, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների աննախարեալ կրծատման մասին է: Անասնապահության ոլորտում կատարված փոփոխությունները նույնպես պայմանավորված են այս հիմնական իրողություններով: Արարատյան դաշտում, օրինակ, անասունների գլխաբանակի ավելացումը կապված է ոչ այնքան բնա-

Հատ գյուղերում տարրեր բանասացների կողմից որպես բացասական երևոյթ շեշտվում եր այս հանգամանքը: Գյուղացիները պարբերաբար նույն հողակտորում մեկ մշակաբույս ցանելը կապում են ոչ թե շիմացության, հողի լեզուն շիականալու, այլ այլնոտրանքային տարրերակների բացակայության հետ: Կապանի շրջանի որոշ գյուղերում, օրինակ նշվում եր, որ առնտրականները հիմնականում լրից են զնուած և հրաժարվում այլ ապրանքներից: Ուստի շատ տնտեսություններ ստիպված լավագույն հողակտորները հատկանուն են հետոց այս մշակաբույսին: Նման օրինակներ գրառվել են նաև հանրապետության բազմաթիվ այլ գյուղերում, ինչը հիմնականում կապված է այլնոտրանքային տարրերակների բացակայության հետ:

կլիմայական բարենպաստ պայմանների, որքան լճտանիքի տնտեսական պահանջմունքների ապահովման հետ:

Կատարված փոփոխությունները հանրապետության գյուղական բնակավայրերի զգալի մասում հանգեցրել են ինքնարավ բնատնտեսական բնույթի համակարգի ձևավորմանը: Կտրտված, միմյանցից մեծ հեռավորությունների վրա գտնվող հողակտորներում ինտենսիվ գյուղատնտեսության վարումն, ըստ էության, հնարավոր չէ: Այս դժվար է նաև մթերքի իրացման հնարավորությունների բացակայության պատճառով: Այսինքն, այս դեպքում մենք գործ ունենք պահանջարկի և առաջարկի հնարավորությունների ամհամապատասխանության հետ: Գյուղացիական տնտեսությունը, ունենալով առաջարկի ավելի մեծ հնարավորություններ, չի կարողանում կազմակերպել իրացումը, բնականարար, նվազեցնելով գյուղատնտեսական գործունեության արդյունավետությունը: Այս իրավիճակում կարևորվում է մեկ այլ գործոն. մշակվում են այնպիսի բույսեր, որոնք, իրենց հերթին, նվազեցնում են շուկայից ունեցած կախվածությունը: Մշակաբույսերի տեսականու ավելացումը, փաստորեն, դառնում է գործունեության արդյունավետության նվազման պատճառ: Առաջարկի ու պահանջարկի փոփոխությունները, ինտենսիվ գյուղատնտեսություն վարելու սահմանափակ հնարավորությունները վերջին տասնամյակում գյուղատնտեսական գործունեությունը բնորոշող կարևորագույն իրողություններ են:

Շուկայական տնտեսությունը, որը հիմնվում է առաջարկի ու պահանջարկի կարգավորմանը պետության սահմանափակ միջամտության սկզբունքի վրա, չի ենթադրում քառային, տարերային հարաբերություններ [64; 73]: Ավելին, նույնիսկ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում պետության ազրարային քաղաքականությունը հիմնվում է գյուղատնտեսության պետական կարգավորման, պետական օժանդակության սկզբունքների վրա: Ֆերմերային տնտեսություններն ապահովագրված են իրացման հետ կապված դժվարություններից, շուկայական գների մեծ տատանումներից հենց պետական երաշխիքների միջոցով: Հայաստանում ձևավորված իրավիճակը հակասում է և՝ շուկայական տնտեսության հիմնարար

սկզբունքներին, և գյուղատնտեսության զարգացման տրամադրանությանը:

Որպես դրա ապացույց կարող ենք քերել նաև հետևյալ փաստը. անցած տասը տարիների ընթացքում չի կատարվել հողատարածքների խոշորացում, չեն ձևավորվել կայուն տնտեսական հիմք ունեցող ֆերմերային տնտեսություններ, կամ դրանց թիվը փոքր է գյուղատնտեսության զարգացման բնականոն ընթացքն ապահովելու համար: Բնատնտեսական բնույթի փակ համակարգի տարրերի ձևավորումը, որի պայմաններում քերքի ավելցուկի իրացումը կատարվում է մասամբ նաև պարզ ապրանքափոխանակության միջոցով, խոսում է առաջին հերթին գյուղատնտեսական գործունեության ցածր արդյունավետության մասին:

Ամփոփելով, կարելի է ևս մեկ անգամ արձանագրել, որ սեփականաշնորհումից հետո կատարված բազմաթիվ ու բազմաբնույթ փոփոխությունները սահմանափակել են ինտենսիվ գյուղատնտեսության վարման հնարավորությունները: Անհատական գյուղացիական տընտեսությունը հողակտորների կտրտվածության և միմյանցից ունեցած մեծ հեռավորությունների պայմաններում չունի ցանքաշրջանառության, գյուղատնտեսական աշխատանքների ամբողջական ցիկլի կազմակերպման հնարավորություններ: Որպես կարևոր գործոն հանդես է գալիս նաև անհրաժեշտ արտադրամիջոցների բացակայությունը: Հաճախ հողի մշակման ծախսերը, առավել ևս՝ անբարենպաստ բնակլիմայական պայմաններում, ավելին են, քան ստացված եկամուտները: Բնական է, որ այսպիսի իրավիճակում գյուղացիական տնտեսությունների մեծ մասը չի կարողանում ապահովել նույնիսկ անհրաժեշտ նվազագույն կենսամիջոցներ:

ՉՈՐՉՈՐԴ ԳԼՈՒԽ

Գյուղական համայնքը և ազգակցական-դրացիական հարաբերությունների բնույթը արդի գյուղում

Կատարված բազմաթիվ փոփոխություններն ազդեցին գյուղական համայնքի^{*} կառուցվածքային միավորների, վերջիններիս փոխհարաբերությունները պայմանավորող գործոնների, համայնքային հարաբերություններում առանձին խմբերի ունեցած դերի վրա:

Գյուղական համայնքը խորհրդային շրջանում միամակարդակ հասարակական կառույց չէր: Սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ձևավորման գործընթացներին զուգահեռ, շարունակում էին կարևոր դեր խաղալ ազգակցական և դրացիական հարաբերություններով պայմանավորված ավանդական բազմաթիվ տարրեր: Եթե նյութական մշակույթում արտահայտված էր համահարթեցման միտումը [52; 53; 54; 56; 59], ապա հոգևոր մշակույթի ոլորտում էրնիկ առանձնահատկություններն, ընդհանուր առմամբ, ավելի ցայտուն են դրսևորվում [60; 62; 63; 67, 71-86; 74, 52-62]: Էրնիկ գործընթացներում այս երկու միտումների առկայությունը բազմաթիվ փոփոխություններ էր ձևավորում նաև արժեքային կողմնորոշումները պայմանավորող հարցերում:

Հաճրապետության անկախացումն արմատապես փոխեց իրավիճակը: Փոփոխությունների սկիզբը դրվեց դեռևս 1988թ.. Արցախյան

* Գյուղական համայնք տերմինն աշխատանքում օգտագործվում է ոչ թե դասական ազգագրական իմաստով. այլ որպես իրավաբանորեն ձևակերպված վարչատարածքային միավոր նշանակող տերմին: Ըստ ՀՀ Սահմանադրության «Հայաստանի Հաճրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Մարզերը կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից» [36]:

շարժման զարթոնքի շրջանում: Շարժման ժամանակ ոչ երկրորդական դեր էին խաղում զգացմունքային գրոծուները, որոնցով և պայմանավորված էր «օտար-յուրային, ազգային-ապազգային, մենքներանք» հակադրությունը: Ծիշտ է, զյուղական միջավայրում այդ հակադրությունը չունեցավ այնպիսի սուր և զանգվածային դրսմորումներ, ինչպես քաղաքներում և մասնավորապես Երևանում, այնուամենայնիվ, հակադրության մոդելն արտահայտվեց նաև այստեղ: Արցախյան շարժումը լրացուցիչ հնարավորություններ ընձեռեց նաև երիտասարդության առավել ակտիվ հատվածի հավակնությունների բավարարման համար:

1991 թ. իրազործված սեփականաշնորհումն էլ ավելի ընդլայնեց այդ հնարավորությունները: Օտար-յուրային հակադրությունում օտարին վերագրվող բացասական զնահատականների աճին զուգընթաց մեխանիկորեն աճում էր նաև յուրայինի գերազնահատման միտումը: Զանգվածային սեփականաշնորհումը դիտարկնան այս մակարդակում հանդիսացավ հակադրության տրամաբանական ավարտ: Այն, որ սեփականաշնորհումը սկսվեց զյուղից, պատահական չէր: Զհավակնելով զնահատականների վերջնական լինելուն (դրա համար պահանջվում են լրացուցիչ ուսումնասիրություններ), այնուամենայնիվ կարծում ենք, որ հողի ընկալումը (որը պարբերաբար վերարտադրվում է զյուղական միջավայրում), միայն տնտեսական հիմնավորում չէ, և հոգևոր մշակույթի ոլորտում ևս հանդես է գալիս որպես ավանդական տարրերի վերարտադրությունն ապահովող կարևոր գործոն: Տնտեսական գործունեության միկրոմակարդակը (օժանդակ տնտեսությունում գործունեության կազմակերպում), օտար-յուրային հակադրության պայմաններում վերախնատավորվելով ու արժեքավորվելով հասարակական կառույցի առանձին միավորների կողմից, փոխադրվեց նաև մակրոնակարդակ: Հողի սեփականատեր դառնալու փաստին վերագրվեցին միայն դրական որակներ ու մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված տնտեսավարման ձևը դիտարկվեց որպես խորհրդային համակարգի այլ-ընտրանքային տարրերակ:

Հաջորդ պատճառը կապվում է զյուղական և քաղաքային բնակչության սեփականության տարբերությունների հետ: Քաղաքներում,

մասնավորապես Երևանում ու խոշոր արդյունաբերական կենտրոններում, մտավորականությունը կարևոր էք է խաղում: Պատահական չէ, որ հենց այստեղ ձևավորվեցին Արցախյան շարժման դեկավարման կենտրոնները, որոնք իրենց տեղական ներկայացուցիչների միջոցով կատարեցին «գաղափարական» առաջնորդի դեր ողջ հայ հասարակության, այդ թվում նաև գյուղացիության համար: Գյուղական համայնքը, ի տարրերություն քաղաքայինի, ավելի պարզ է կառուցվածքային տեսանկյունից, հետևաբար նաև ավելի հեշտ վերահսկելի, ուստի արճատական վերափոխումները կարելի եր սկսել հենց այստեղից: Որպես ևս մեկ կարևոր պատճառ հանդես է զայխ նաև այն, որ գյուղացիության՝ սոցիալ-մասնագիտական տեսանկյունից կառուցվածքային պարզությունը փոխհատուցվում է ազգակցական և դրացիական կայուն հարաբերությունների համակարգով, որոնք ել կարևոր դեր խաղացին ոչ միայն ներընտանեկան, այլ նաև հասարակական ու համայնքային հարաբերություններում վերջին տասնամյակի ընթացքում:

Վերափոխումներն ազդեցին գյուղական համայնքի բոլոր կառուցվածքային միավորների վրա:

Սոցիալ-մասնագիտական խմբերի մակարդակում դիտվող ամենակարևոր փոփոխությունը դրանց թվի նվազումն է: Գյուղերում խորհրդային շրջանում կարևոր դեր խաղացող տարրեր խմբեր՝ վարչական մտավորականություն, գյուղատնտեսության տարրեր բնագավառների աշխատողներ, արդյունաբերական բանվոր-ծառայողներ՝, սպասարկման ոլորտի աշխատողներ^{**}. այսօր որպես այդպիսին գոյություն չունեն, փոփոխվել կամ էապես կրծատվել են: Սո-

* Միայն գյուղատնտեսությամբ գրադփոր բնակավայրերում, որոնք 1970-80-ական թթ. եւ աշքի չին ընկնում սոցիալ-մասնագիտական խմբերի բազմազանությամբ. այդ փոփոխությունները կարող են էական հետևանքներ չունենալ: Մինչդեռ արդյունաբերական ծեռնարկություններ, զարգացած ենթակառուցվածք, քաղաքացիների հետ տնտեսական կապեր ունեցող բնակավայրերում սոցիալ-մասնագիտական խմբերի թվի նվազումը սահմանափակվում է համայնքի կառուցվածքային բազմազանությունը և գործառութային ոլորտները:

** Սաեւթե սպասարկման ոլորտում ընդգրկվածներ գոյություն չունեն, սխալ կլինի քանի որ գյուղերի մեծ մասում, հատկապես խոշոր գյուղերում, գործում են խանութներ, կրպակներ, որոնք փաստորեն իրականացնում են սպասարկման ոլորտին հատուկ գործառնություններ: Սակայն այս խումբը դեռ չի կայացել որպես առանձին մասնագիտական խումբ, քանի որ կրպակների, խանութների տերերը այն լայնորեն համատեղում են գյուղատնտեսությամբ:

ցիալ-մասնագիտական խմբերից իրենց դերն ու նշանակությունը մասնակիորեն պահպանել են երկուս՝ գյուղապետարանների վարչակազմը և ուսուցիչները։ Գյուղապետարանների վարչակազմի առանձնացումը որպես առանձին մասնագիտական խումբ պայմանական է, քանի որ այն բաղկացած է մի քանի հոգուց (գյուղապետ, տեղակալ, քարտուղար, առանձին քաժինների ղեկավարներ), մեծ գյուղերում կարող է հասնել մինչև տասը և ավելի հոգու, սակայն իրական ազդեցություն ունեն իիմնականում գյուղապետերը։ Տեղական ինքնակառավարման համակարգի վերափոխումները, համայնքային ընտրովի ավագանինների ձևավորումը դեռևս չեն տվել ակնկալվող արդյունքները, քանի որ անկատար են տեղական բյուջեների ձևավորման մեխանիզմները, գյուղապետ-ավագանի, գյուղապետարան-մարզպետարան հարաբերությունները։ Հաջորդ մասնագիտական խումբը, որը մասնակի պահպանել է իր դերային գործառույթները, ուսուցիչներն են։

Սակայն էապես փոխվել են նաև այս խմբի դերն ու նշանակությունը պայմանավորող իիմնական գործոնները։ Դրանց շարքում կարենոր են հատկապես արժեքային կողմնորոշումների հետ կապվածները։ Բարձրագույն կրթությունը, որը 1970-80-ական թթ. հանդես էր գալիս որպես հասարակական դիրք, հեղինակություն ու նյութական բարեկեցություն ապահովելու կարենոր պայման, այսօր այդպիսին չէ։ Ցածր աշխատավարձը, գյուղատնտեսությունը հարկադրված իիմնական մասնագիտության հետ համատեղելու անհրաժեշտությունը սահմանափակում են ուսուցիչների դերային գործառույթները։

Հաջորդ պատճառը կապված է ուսուցական անձնակազմի սերնդափոխության արդի որոշ միտումների հետ։

Ի տարբերություն խորհրդային շրջանի, երբ ուսուցիչ լինելը գյուղական միջավայրում ուղղակի դիրք և հեղինակություն ապահովելուց զատ, տախու էր նաև նյութական իիմնական պահանջմունքները բավարարելու հնարավորություններ, այսօր ուսուցիչների մեծամասնությունն ավելի վաստ է ապրում, քան համայնքի մնացած անդամները։ Ուսուցիչները, քանի իրենց իիմնական պարտականություններից, ստիպված են զուգակցել նաև գյուղատնտեսական տարբեր գրադարձները։ Կարենոր է նաև, որ բարոյական և սոցիալական նոր երևույթները հանգեցրել են արժեքային դաշտի վերահճառատափորման և արդյունքում կրթության հանդեպ գյուղում ձևավորված նախակին վերաբերունքի փոփոխության, երբ կարևորվում են առաջին հերթին կենսական նվազագույնի ապահովման խնդիրները և կրթությունն այս համատերաստում նդված է երկրորդ պլան։

Խորհրդային շրջանում ուսուցական կողմեկիվները համալրում էին գերազանցապես բարձրագույն և միջնակարգ մասնագիտական (մանկավարժական) կրթություն ունեցող

Ի վերջո գյուղերի մեծ մասում ձևավորվում և աստիճանաբար տարածվում է այն մտայնությունը, որ ուսուցիչը «շարքային գյուղացի է, անում է այն, ինչ մյուսները, ոչնչով չի տարբերվում»: Խորհրդային շրջանում ևս ուսուցիչը բազմագործառության էր, սակայն այսօր կատարվել է ըստ կարևորության գրադարձների փոփոխություն՝ ի վեաս ոչ միայն հիմնական մասնագիտության, այլ նաև կոչման:

Գյուղերի մի մասում որպես առանձին սոցիալ-մասնագիտական խումբ կարելի է առանձնացնել նաև արտագնացությամբ գրադարձներին: Խորհրդային շրջանում արտագնացության պատճառները, հիմնական դրսևորումները և գյուղական համայնքի վրա դրանց ունեցած ազդեցությունը, ուսումնասիրվել են ինչպես տնտեսական ու տնտեսաաշխարհագրական, այնպես էլ ազգագրական ու երնոսոցիոգիական առումներով [21; 22; 23]: Նյութերն ու ուսումնասիրությունները [14-17, 30-33] ցույց են տալիս, որ այսօր արտագաղթն ու արտագնացությունը, իրենց տարրեր դրսևորումներով, ունեն աննախադեպ տարածում ու ընդգրկում: Արտագնա աշխատանքի մեկնողների բարձր տեսակարար կշիռ ունեցող գյուղերի շրջանակը վերջին տասնամյակում ընդլայնվել է, ընդգրկելով բազմաթիվ նոր բնակավայրեր: Սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, անհրաժեշտ կենսամիջոցներ ապահովելու հնարավորությունների բացակայությունը, գյուղի նկատմամբ պետական հովանավորության քաղաքականության անբավարարությունը և բազմաթիվ այլ իրողություններ այս երևույթի հիմնական պատճառներն են:

Ազգագրական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի այն, թե ինչպես է ազդում այս երևույթը համայնքի տնտեսական և հասարակական կյանքի վրա: Բնական է, որ արտագնացությունից ստացվող եկամուտներն ընձեռում են գյուղատնտեսական աշխատանքների ամբողջական ցիկլի կազմակերպման հնարավորություններ: Սակայն սա երևույթի մի կողմն է միայն: Դեռևս խորհրդային շրջանում,

կաղըների հաշվին, որոնց պակասը լրացվում էր նաև քաղաքներից պարտադիր գործուղումների միջոցով: Վերջին տարիներին մանկավարժական կաղըների համարման այս տարբերակները հիմնականում չեն գործում: Պակասնել է գյուղերից բուհեր ընդունվողների թիվը, չկան գործուղված մանկավարժներ: Մանկավարժական կոլեկտիվները համալրվում են հիմնականում կենսարշակի անցած ուսուցիչների, իսկ ոչ եզակի դեպքերում նաև դպրոցի լավագույն շրջանավարտների հաշվին, ինչը բնականարար ազդում է ուսուցման որակի վրա:

հատկապես նախալեռնային ու լեռնային գոտիների գյուղերում, արտահոսքի պայմաններում արտահայտված էին դառնում համայնքի կառուցվածքային միատիպության իրողությունները՝ ինչպես սոցիալ-մասնագիտական, այնպես էլ տարիքային տեսանկյունից: Վերջին տասնամյակը բնութագրվում է այս իրողությունների աճնախաղեապ տարածմամբ: Հայաստանից հեռանում է բնակչության, այդ թվում նաև զյուղական բնակչության այն հատվածը, որը գործունյա է, կարողանում է ներգրավվել տնտեսավարման և շուկայական նոր հարաբերությունների ոլորտը, ապահովել նյութական համեմատաբար բարեկեցիկ վիճակ: Դրսում որոշակի դիրքի հասածները տեղափոխում են նաև ընտանիքները, դպրոցահասակ երեխաններին, և արդյունքում՝ առավել շարժունակ խմբի բացակայության պայմաններում ավելի է խորանում զյուղական համայնքի սոցիալ-մասնագիտական և սեռատարիքային կառուցվածքային միատիպությունը: Հատկանշանական է նաև, որ մեկնածների մի մասը տեղափոխում են ոչ միայն իրենց ընտանիքը, այլ նաև ազգականներին, բարեկամներին: Այս ճանապարհով փորձ է արվում ոչ միայն նպաստել նրանց նյութական բարեկեցության բարձրացմանը, այլև դրսում ազգական հարաբերությունների ընձեռած հնարավորությունների միջոցով ապահովել պաշտպանվածության յուրատեսակ մքնողոր: Երիտասարդության և հատկապես նրա ակտիվ, տնտեսական գործունեության ոլորտն ընդգրկվելու ունակ հատվածի արտահոսքը էապես սահմանափակում է համայնքի ինքնակարգավորման և ինքնակազմակերպման հնարավորությունները:

Նյութերի քննությունը [14-19] ցույց է տալիս, որ սոցիալ-մասնագիտական և սեռատարիքային խմբերի, վերջիններիս դերի ու նշանակության տեսանկյունից համայնքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ: Սոցիալ-մասնագիտական շատ խմբեր այսօր գոյություն չունեն, իսկ ուսուցիչների, զյուղապետարանների վարչակազմի, արտագնացությամբ գրադպուների առանձնացումն ավելի շատ պայմանական է, քանի որ եթե նախկինում սոցիալ-մասնագիտական խումբը բնորոշվում էր որպես աշխատանքային գործունեության նույն բնագավառում ընդգրկված, մասնագիտական, արժեքային որոշակի ընդհանրություններ ունեցող ամբողջություն, ապա

այսօր նախկին քնութագրիշները հիմնականում չեն պահպանվում: Այսօր գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը կարելի է ներկայացնել որպես անհատական կամ կոլեկտիվ գյուղացիական տնտեսություն վարող խումբ:

Վերջին տասնամյակում համայնքը քնորոշող նոր իրողությունների շարքում կարևոր նշանակություն ունի ունեցվածքային խմբերի ձևավորման գործընթացը: Ունեցվածքային շերտավորումը, որպես ոչ միայն տնտեսական, այլև հասարակական հարաբերությունների վրա որոշակի ազդեցություն ունեցող երևոյթ, նորություն չէ հայկական միջավայրի, այդ թվում նաև գյուղական բնակչության համար: Ե՛վ նախախորհրդային, և՝ խորհրդային շրջաններում այն հատուկ է եղել գյուղին: Սակայն 1970-80-ական թթ. արդեն կարելի էր ասել, որ ունեցվածքային համահարթեցման և միջին հնարավորություններ ունեցող խմբերի ձևավորման գործընթացները կա'մ ավարտված էին, կա'մ ավարտվում էին: Բնական է, որ գյուղում կային և՝ միջինից բարձր, և՝ ցածր հնարավորություններ ունեցող ընտանիքներ: Սակայն աղքատությունը և նրա ծայրահեռ դրսնորումները դուրս էին մղված գյուղական միջավայրից:

Վերափոխումներից հետո արդեն ունեցվածքային շերտավորումը՝ հարուստ-միջին-աղքատ աստիճանակարգմանը, հանդես է գալիս որպես գյուղական համայնքը քնութագրող կարևոր իրողություն: Ունեցվածքային աստիճանակարգումն այս տեսանկյունից բազմամակարդակ է:

Գյուղի համար կարևորագույն նշանակություն ունեցող այս իրողությունը մենք ևս կբնութագրենք՝ այդ բազմազանությունը հաշվի առնելով:

Հստ տարբեր գյուղերում գրառված նյութերի [14-19], այսօր որպես համենատարար բարվոք վիճակում գտնվող առանձնացվում են Արարատյան դաշտի մարզերը, որոնք ունեն գյուղատնտեսությամբ արդյունավետ գրաղվելու և գյուղմթերքների իրացման ավելի մեծ հնարավորություններ:

Մարզերի շրջանակներում արդեն առանձնացվում են համենա-

տական առավելություններ ունեցող շրջաններ :

Շրջանների ներսում համեմատությունների հիմքում դրվող գործնների թիվն ավելանում է, տրվում են ավելի կոնկրետ արժեքավորումներ ու բնորոշումներ, որոնք կառուցվում են շրջանի առանձնահատկությունների հիման վրա”:

Փաստորեն, զյուղերի աստիճանակարգման շրջանային մակարդակում դիտարկվում է ունենոր, համեմատաքարտ քարեկեցիկ, միջին կամ աղքատ զյուղերի առանձնացումը պայմանավորող գործոնների ավելի մեծ բազմազանություն, քան ըստ մարզերի դասակարգման ժամանակ:

6.2

Ծիրակի մարզում առանձնացվում է Ախուրյանի շրջանը, որը հացահատիկի և կարտոֆիլի մշակուրյան կենտրոն է. Գեղարքունիքի մարզում Մարտունու և Գավառի շրջանները. Վայոց Զորում այգեգործության կենտրոն համարվող Եղեգնաձորի շրջանը. Սյունիքի մարզում Գորիսի ու Սիսիանի շրջանները. Տավուշում Խչեանի, Նոյենքերյանի շրջանները և այլն: Նման տարբերակումը կատարվում է հիմնականում մեծ կամ երկու գործոնի հիման վրա և կապված է զյուղատնտեսությամբ գրադարձու հնարավորությունների հետ: Կարևոր է հատկապես այն, որ ցանկացած համեմատություն, որը կառուցվում է համաժամանակյա (սինթրոն) ճակարտակում. փոխադրվում է տարածամանալյա (դիաքրոն) հարթություն և նույնիսկ համեմատաքարտ բարվոր վիճակում գտնվող մարզերում ու շրջաններում, խորհրդայինի հետ համեմատության առանցքում, արձանագրվում են կենսամակարդակի կտրուկ անկում. զյուղատնտեսական գործունեության ցածր տեկանութերություն, երիտասարդության համար աշխատանքի հնարավորությունների բացակայություն և այլն:

Սյունիքի մարզի Կապանի շրջանում, օրինակ, որպես համեմատաքարտ բարեկեցիկ զյուղեր առանձնացվում են Դավիթ Բեկը և Եղվարդը. Որոնք բերդի հողատարածքներ ունեն: Գորիսի շրջանում, որպես բարեկեցիկ, առանձնացվում են Տեղը. Վերիշենը. Հարթաշենը. Քարահոնջը, որոնցից առաջինները բերդի հողատարածքներ ունեն. իսկ Քարահոնջը՝ թրի այցիններ: Սիսիանի շրջանում որպես բարեկեցիկ առանձնացվում են Բոնակը և Բարձրավան զյուղերը. առաջինն այն պատճեռով, որ բերդի հողատարածքներ ունի. իսկ երկրորդը. որ հողատառ է և բարենպաստ պայմաններ ունի անասնապահության զարգացման համար: Ծիրակի մարզի Ախուրյանի շրջանում որպես բարեկեցիկ առանձնացվում են Ազատանը, Օսկեհասկը. Մարտաշենը: Նման չափանիշներով կատարվում են առաջինները, որոնք բարեկեցիկ զյուղեր առանձնացվում, որոնք զյուղատնտեսությամբ գրադարձու պայմանները և իրացման հնարավորությունները սուլ են: Փաստենք, որ ինչպես ըստ մարզերի, այնպատ է ըստ շրջանների ու զյուղերի գոսակարգման դեպքում, բացի ընդհանուրներից. կարևոր դեր են խաղում տեղական առանձնահատկություններով պայմանավորված գործոնները. որոնք կարող են փոխվել ըստ տարիների: Աղեղի գոտում կարևորվում է զյուղերի վերականգնվածության աստիճանը: Սահմանամերձ գոտում ի թիվս այլ գործոնների, առաջին պահ է մղվում այն, թե ինչ չափով են մշակվում տեղականաշնորհված հողատարածքները: Այստեղ արդին ծանր տնտեսական կացությունը պայմանավորված է ոչ միայն բերդի հողատարածքների սակագությամբ, այլ նաև դրանց զգալի մասի մշակման Վտանգավորությամբ: Աղքատ զյուղերի առանձնացման հիմքում դրվող գործոններից մեկը, որը կարելի է դիտարկել և որպես ընդհանուր հաճրապետական, և որպես տեղական կապվում է զյուղական բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխման հետ, եթե առաջանում է անհրաժեշտ աշխատումի պահան:

Ներհամայնքային մակարդակում արդեն հիմնական տարրերակ-ները երեքն են. այստեղ առանձնացվում են հարուստ, միջին, աղքատ ընտանիքներ:

Հարուստ ընտանիքների բնորոշման հիմքում դրվում են մի շարք չափանիշներ ու սկզբունքներ, ընդ որում տարրեր շրջաններում ու գյուղերում դրանք ունեն դրսերման զանազան ձևեր։ Գյուղերում առանձնացվում են հարստանալու տարրեր ուղիներ:

Առաջինը կապվում է սեփականաշնորհման սկզբում ունեցած հնարավորությունների առավելագույն օգտագործման հետ։ Հարուստների (կամ հարստացածների) այս խումբը հաճախ կազմում են նախկին նոմենկատուրայի ներկայացուցիչները, ինչպես նաև Արցախյան շարժման ալիքի վրա զյուղական միջավայրում բարձր դիրքի հասածները։ Այս եղանակը զիսավորապես կապվում է օրենսդրական դաշտի անկատարության, հովանավորչության և կամայականության մքնողորտում պետական-համաժողովրդական սեփականության յուրացման հետ և տարածված էր հատկապես 1991-92 թթ.։ Այս խմբի կազմը տարրեր է առանձին գյուղերի համար, ավելին, այն կարող է որոշ զյուղերում ընդհանրապես գոյություն չունենալ:

Հետազոտված գյուղերում առանձնացվում է նաև ունենորների և մեկ խումբ, որը համեմատաբար բարեկեցիկ վիճակ է ապահովել ոչ գյուղատնտեսական գործունեության ճանապարհով։ Արտազնացության բարձր տեսակարար կշիռ ունեցող գյուղերում այս խումբը կազմում են մարդիկ, ովքեր դրասում հիմնականում Ռուսաստանի Դաշնությունում սեփական գործ ունեն, համագյուղացիներից կազմված շինարարական բրիգադներ են տանում, մեծ գումարներ վաս-

* Ընդհանուրը, որը դիտվում է ողջ հանրապետությունում, կապված է «քաղաքային» և «զյուղական» չափանիշներով հարուստ ընտանիքների հստակ տարրերակման հետ։ Գյուղերի մեծ մասում, ըստ տարրեր քանասացների, «քաղաքային» չափանիշով հարուստ ընտանիքներ գրեթե չկան, կամ, լավագույն դեպքում, դրանք կազմում են ընդհանուն մեկերկուսը։ «Քաղաքային» հարուստները սեփական ծենարկություններ, խանութներ, լայն ֆինանսական հնարավորություններ, շքեղ առանձնատեր ու ավտոմեքենա ունեցողներն են։ Ազգագրական տեսանկյունից ուշագրավ է նաև այն, որ «քաղաքային» հարուստների ծևափորումը ըստ գյուղացիների կապվում է ավելի շատ քաղաքների, հատկապես Երևանի ընձեռած ավելի մեծ հնարավորությունների հետ [Վերջին տասնամյակում հայ հասարակության սոցիալական շերտավորման, դրա առանձնահատկությունների, այս իրողությունը բնութագրող գործուների մասին ուշագրավ նյութեր ու եղանակնուններ կան Ա. Թաղևոսյանի աշխատություններում։ Մաճրամասն տես՝ 25; 26; 27]:

տակում: Այս խմբի մեջ մտնողներն առանձնանում են նյութական լայն հնարավորություններով՝ շրեղ բնակարաններ, արտասահմանյան մեքենաներ և այլն: Միաժամանակ, նրանց որոշ մասը վերջին տարիներին հեռանում է գյուղերից, մշտական բնակություն հաստատում դրսում և տեղափոխում նաև ընտանիքները: Քաղաքամերձ, հատկապես Երևանի, մասամբ նաև Գյումրիի և Վանաձորի հարեանուրյանք գտնվող գյուղերում առանձնացվում է ևս մեկ փոքրարիվ խումբ՝ գործարարները, որոնք մեծածախ առևտրով են զբաղվում, հիմնարկություններ ունեն: Արտագնացությունը ոչ միշտ է բարձր եկամուտներ ապահովում: Առևտուրը նույնպես կայուն և միշտ բարձր եկամուտներ ապահովող զբաղմունք չէ: Ուստի այս խմբի կազմը փոփոխունակ է, հաճախ միջինից բարձր կենսամակարդակ ունեցողը կարծ ժամանակում կորցնում է ունեցածը:

Արտագնացության կենտրոններում առանձնացվում է հարուստների ևս մեկ խումբ, որոնք խոշոր գործարարությամբ են զբաղվում դրսում՝ ՌԴ-ում և այլ երկրներում: Հատկանշական է, որ գյուղացիները դրանց երթեմն «միլիարդատերեր» են անվանում: Այդպիսի հարուստները սովորաբար մեկ-երկուսն են: Հարուստների այս խումբը հիմնականում ընդունելի է համարվում և դրական գնահատվում, որովհետև ա) հարստացել են դրսում, «քրտինք քափելով, առանց պետականը յուրացնելու ու քալանելու», թ) որովհետև հարուստ լինելով հանդերձ շարունակում են մնալ «սովորական, հասարակ» մարդ, զ) որովհետև օգնում են հարազատներին, համագյուղացիներին. «խոպան են տանում, պարտքով փող տալիս»^{*}:

Հետաքրքիր է, որ ըստ գյուղացիների ընկալման հարուստների այս տիպը տեղափորփում է «քաղաքային հարուստների ստանդարտների մեջ»՝ շրեղ առանձնատներ, մեքենաներ, կահավորանք, «անսպառ ֆինանսական հնարավորություններ»: Հարուստների այս խումբը որոշակի դեր է խաղում նաև ներկանայնքային հարաբերություններում: Սակայն այդ գործընթացը չունի անհրաժեշտ արագութ-

* Մարմաշնուում (Ծիրակ) նրանցից մեկը դպրոցի վառելիքի գումարն է տվել, միայնակ քոչակառներին ու ծնողազորկ երեխաներին 50-ական Տ է տվել: Գոզարանում Մարտիսյան եղբայրներն իրենց միջոցներով փորձ ՀՀԿ են կառուցել և 30-40 ընտանիքի անվճար էլեկտրաէներգիա են տրամադրում [16, 42, 44]: Ազատանից արտագնա աշխատանքի մեկնածները 1994թ.-ին 36 մլն. ոռական ոռութիւն են ուղարկել համագյուղացիներին, ինչը տվել է Պարուանքի համար վառելիք գնելու, մեխանիզատորներին վարձատրելու, կարիքավոր ընտանիքներին կարտոֆիլ և վառելափայտ գնելու հնարավորություններ:

յունն ու ընդգրկումը: Նախ, այս խումբը ձևավորվում է հիմնականում արտագնացության բարձր մակարդակ ունեցող գյուղերում: Հաջորդ պատճառն այն է, որ, չնայած համայնքային հարաբերությունների վրա ունեցած ազդեցությանը, այս խումբն «փնքնամփոփ», ներփակ» է, և նրա կապերը համայնքի հետ սահմանափակվում են օգնության մակարդակով: Այն հիմնականում չունի համայնքի կառավարումն իր ձեռքում կենտրոնացնելու ծզտում: Կարծում ենք, որ սրանում ոչ երկրորդական դեր է խաղում նաև այն, որ այս խումբը ավելի շատ «քաղաքացի» է կամ քաղաքային ապրելակերպի կրող, քան գյուղացի»: Մյուս կողմից, այն հանդիսանում է ազգակցական և դրացիական հարաբերությունների ավանդույթների կրողը, ինչը և նրան կապում է իր գյուղի և համազյուղացիների հետ:

Այն գյուղերում, որտեղ արտագնա աշխատանքը տարածված չէ, համայնքի կառուցվածքը բնորոշվում է «հարուստների բացակայությամբ» կամ, լավագույն դեպքում, «գյուղական չափանիշներով» հարուստ մեկ-երկու ընտանիքի առկայությամբ:

Գյուղերում առանձնացվում է հարուստների կամ միջինից բարձր կենսամակարդակ ունեցողների ևս մեկ խումբ, որի հիմնական բնութագրի հատկանիշը գյուղատնտեսության միջոցով հարստանան է: Այս խումբը կազմում են ֆերմերները, վարձակալությամբ մեծ հողակողուները:

Նշենք նաև, որ այսպիսի խմբեր առանձնացվում են ոչ բոլոր գյուղական բնակավայրերում: Այդպիսիք կամ հիմնականում Արարատյան դաշտի գյուղերում, ինչպես նաև նախալեռնային և լեռնային գոտու այն գյուղերում, որտեղ պայմանները բարենպաստ են ինչպես անասնապահությամբ, այնպես էլ երկրագործությամբ զբաղվելու համար:

* Որոշ գյուղերում, օրինակ, նշվում էր. «Մի քանի ընտանիք կա, որ լավ է ապրում: Սրանք շատ անասուններ են պահում, տեխնիկա ունեն»: Եթե համեմատություն կատարենք նախակողեկոփացնան շրջանի հետ, ապա գյուղացին ներկայացնում է «կուլակի դիմանկարը» (շատ անասուն պահել մեծ հողատարածքներ մշակել և այլն): Հողի վրա աշխատելն էական է գյուղական հարուստների այս տիպի առանձնացման ժամանակ. «Ամբողջ ընտանիքն առավոտից իրկուն տաճքով է, բրտինք բափում, դրա համար էլ լավ են պարուն: Այդպիսի մարդկանց հալալ է»: Հարուստների այս տիպը կենցարով և վարրութարրով էլ շատ շի տարբերվում համազյուղացիներից, հատկապես ամենօրյա շփումների ժամանակ: «Ըսա և՛ հող է մշակում և՛ անասուն է պահում, և՛ դուրս է զախս գյուղամեջ, հարկ եղած դեպքում օգնում է»[14-16]:

Փաստորեն, զյուղական համայնքում, ելնելով տարրեր սկզբունքներից ու չափանիշներից, առանձնանում են հարուստների, միջինից բարձր հնարավորություններ ունեցող ընտանիքների մի քանի խմբեր: Մի դեպքում դրանք կարող են լինել մեծահարուստները, մեկ այլ դեպքում՝ զյուղատնտեսությամբ զբաղվելու ճանապարհով նյութական բարեկեցության հասած ընտանիքները: Սակայն հասարակական, համայնքային հարաբերություններում այս խմբերը դեռևս չունեն նշանակալի ներգործություն: Նրանց համար ավելի կարևոր է ընտանիքի նյութական բարեկեցությունն ապահովելը և մերժավոր ազգականներին աջակցելը, քան համայնքի կառավարմանն ակտիվ մասնակցելը և համահամայնքային խնդիրներ լուծելը:

Գյուղերի մեծ մասում դեռևս ավարտված չեն միջակի՝ միջին տնտեսական հնարավորություններ ունեցող սոցիալական խմբի ծեսավորումը: Նյութերը ցույց են տալիս, որ միջին հնարավորություններ ունեցող ընտանիքների համեմատաբար բարձր տեսակարար կշիռ արձանագրվում է Արարատյան դաշտի. զյուղատնտեսությամբ զբաղվելու բարենպաստ պայմաններ ունեցող շրջանների և արտագնացության մեծ մասշտաբներ ունեցող գյուղերում:

Վերջին տասնամյակում զյուղը բնութագրող կարևոր իրողություններից է աղքատ ընտանիքների թվի կտրուկ ավելացումը: Ուշագրավ են զյուղական միջավայրում աղքատությանը տրվող բնորոշումները:

Բերված բնորոշումները իրական աղքատության տնտեսական և սոցիալական ցուցիչներ են: Կարևոր են նաև այն հոգեբանական ցուցիչները, ըստ որոնց աղքատությունը համարվում է ոչ միայն իրական

«Աղքատ է նա, ով հաց չունի, հաց գնելու փող չունի, մի կերպ ծայրը ծայրին է հասցնում» [38, 4]: «Աղքատ է նա, ով ամսվա 30 օրից 20 օրում ուստում է առանց յուղի եփված կարտոֆիլը, խնում է առանց շաքարի թեյ և չունի հաց գնելու փող» [38, 4]: «Եթե այսօր ին տոն հյուր գա, չեմ կարող հյուրասիրել» [38, 4]: Վարդենիսի շրջանում աղքատ ընտանիքներն առանձնացվում են հետևյալ որակումներով. «Աղքատ է նա, ով աշխատանքից ոչինչ չի ստանում»: «Նա է աղքատ, ով աշխատանք չունի»: «Նա է աղքատ, ով ոչինչ չունի» [14-16]: Ընդհանրացված ձևակերպումն այսպիսին էր. «Եթե հաց չունես, որեմն աղքատ ես»: Սպիտակի շրջանում «աղքատ է նա, ով բնակարան չունի, ապրում է ժամանակավոր կացարանում, տնակում, չունի բնակարան կառուցելու հնարավորություն»: Աղետի գոտում քարաշնեն բնակարանի բացակայություն-աղքատություն կապն ընդգծված է հատկապես Գյունդի քաղաքում: Այստեղ նոյնպես, եթե չունեն բնակարան և այս կառուցելու հնարավորություններ, որեմն աղքատ են: Եվ Սպիտակի շրջանում, և Շիրակում, բացի քարաշնեն բնակարանի բացակայությունից, աղքատությունը դարձյալ կապվում է «հացի բացակայության, մի կերպ ծայրը ծայրին հասցնելու», «աշխատանք չունենալու» հետ:

է, այլև պոտենցիալ երևոյք^{*}: Իրական և պոտենցիալ աղքատության ծների առկայությունը պատճառ է նաև տարրեր գյուղերում որպես աղքատ առանձնացվող ընտանիքների թվի տատանումների: Յուրաքանչյուր գյուղ ունի իր «փսկական» աղքատ ընտանիքները, որոնք զգալի թիվ են կազմում: Աղքատության «տեղային» դրսորումներն ընդունելով հանդերձ (աղեսի զոտի, փախստականաբնակ և սահմանամերձ շրջաններ), կարելի է փաստել, որ այսօր հանրապետության գյուղական բնակչության մեջ առկա է աղքատ ընտանիքների կայուն կատեգորիա: Դրանք հիմնականում միայնակ և օգնություն չստացող բոշակառուներն են, բազմազավակ, անշափահաս երեխաներից կազմված ընտանիքները, տղամարդ զիսավոր չունեցող ընտանիքները, այսինքն այնպիսիք, որոնք աշխատուժի կարիք ունեն:

Բնական է, որ աղքատությունը, որպես արդի գյուղի համար նոր և անսպասելի երևոյք, պետք է պատճառաբանվի, առանձնացվեն կենսամակարդակի կտրուկ անկումը պայմանավորող գործոնները: Գյուղական միջավայրում որպես առկա ծանր կացության ամենակարևոր պատճառ, առանձնացվում է զանգվածային հապճեաւ սեփականաշնորհումը, նույնիսկ այն դեպքում, եթե առկա էր բարեփոխումների անհրաժեշտության գիտակցումը:

Գյուղացիների զգալի մասը, հաճախ նաև երիտասարդները, տնտեսական համակարգերի համեմատության ժամանակ նախապատվությունը տալիս են խորհրդայինին, իսկ խորհրդային պետությունն ընկալվում է «որպես ուժեղ և ժողովրդի մասին մտածող պետության» չափանմուշ: Պետության դերի ընկալումը, մեր կարծիքով, կարևոր է գյուղում առկա բազմաթիվ իրողություններում: Խորհրդային պետությունն անընդհատ ընդլայնում էր տնտեսական, նաև հա-

* «Այսօր աղքատ շիամարփող վաղը կարող է դառնալ աղքատ», «աղքատությունը ոչ միայն հացի, այլև հեռանկարի բացակայությունն է», «Եթե մարդ չգիտի, թե վաղն իր հետ ինչ է լինելու, ուրեմն աղքատ է», «Եթե չունեն երեխաների նորմալ դաստիարակելու, հազցնելու, դպրոց ուղարկելու, ապազան կարգավորելու հնարիավորություն, ուրեմն աղքատ եա»: Երեխաների ապազայի հետ կապված անորոշությունը աղքատության զգացողությունը խորացնող շափազանց կարևոր գործոն է: Ավանդաբար հայ ընտանիքում մեծ տեղ է հատկացվել երեխաների դաստիարակության, ապազայի հետ կապված հարցերին [61]: Վերջիններիս անորոշ ապազան ձևավորում է շարունակական աղքատության մտայնություն: «Եթե այսօր ես չունեմ երեխաներիս ուսման տալու, ֆինանսապես օգնելու հնարիավորություններ, ապա նրանք վաղը իմ նման աղքատ են լինելու»: Փաստորեն, ապազայի անորոշությունը պոտենցիալ աղքատության կարևորագույն ցուցիչն է ընտանիքների ճնշող մնամանանությունում [29; 37; 41; 42; 43; 44]:

սարակական կյանքի կարգավորման գործընթացներին մասնակցության շրջանակները, որոշ չափով արհեստականորեն հետխն պլան մղելով ունեցվածքային տարրերությունների դրսևումները: Այդ պատճառով էլ անկախության շրջանում պետական միջամտության սահմանափակումը կամ բացակայությունը որակվեց որպես պետության քույլ և անտարբեր լինելու արտահայտություն: «Պետությունը հողը տվեց զյուղացուն ու մի կողմ քաշվեց: Ոչ մի բանի մասին չի մտածում: Գյուղացուն հիշում է միայն հարկեր հավաքելու ժամանակ»: Փաստորեն զյուղում սեփականաշնորհնան և մասնավորեցման ընթացքում քույլ տրված սխալներն ու վրիփումները, ինչպես նաև պետության գործառույթների սահմանափակումը այսօրվա ժանր կացության գլխավոր պատճառներից են: Գյուղացին չի ընդունում այն, որ պետական միջամտության սահմանափակումը անհրաժեշտություն է շուկայական հարաբերություններին անցման պայմաններում: Նրա պատկերացումներում պետությունը շարունակվում է նոյնացվել «խորհրդային պետության հետ», որն «ուժեղ, ժողովոյի մասին մտածող էր» [13]: Մնացյալ պատճառները՝ քունաքիմիկատների բացակայություն կամ բանկություն, տեխնիկայի պակաս, իրացման շուկայի սահմանափակություն, ածանցված են վերը թվարկվածներից և վերջին հաշվով դարձյալ հանգում են պետական միջամբության բացակայությանը կամ անբավարարությանը: Գյուղական միջավայրում աղքատության օբյեկտիվ պատճառներին ավելանում են նաև սուրյեկտիվ գործոնները :

Հանրագումարի բերելով, կարելի է արձանագրել, որ վերջին տասնամյակում զյուղական համայնքը բնութագրվում է կառուցվածքային միատիպությամբ: Սոցիալ-մասնագիտական խմբերը կարևոր դեր չեն խաղում համայնքային, հասարակական հարաբերություններում: Ունեցվածքային խմբերի, մասնավորապես միջակի ձևավորումը նույնպես չունի օրինաչափ ընթացք ու ընդունակություն: Ինչպես բազմա-

«Գյուղացին իրավունք չունի աղքատ լինել, որովհետև կարող է հող ճշակել և անասուն պահել: Սակայն երկու դեպքում էլ անհրաժեշտ է պետության օգնությունը»: «Քանի դեռ հոգիս առողջ է, ծեղթըն՝ ամուր, ես աղքատ չափուր է լինեմ, ախր ամոր է»: Աղքատության պատճառ է հանդիսանում ոչ միայն պետական հովանափորության բացակայությունը. «Աղքատ է նաև նա, ով չի ուզում աշխատել, չի հասկանում հողի լեզուն, ուզում է միանգանցից հարատանալ»: Պատահական չ, որ որոշ աղքատ ընտանիքների և անհատների վերագրվում են բացասական որակումներ. «ծուլություն, անկարողություն» [14-17]:

թիվ այլ համակարգերում ու ենթահամակարգերում, այստեղ նույն պես դիտարկվում է այն օրինաչափությունը, ըստ որի զյուղական համայնքի բնականոն կենսագործունեությունն ապահովող տարրերակների բացակայության կամ սահմանափակման պայմաններում չեն ձևավորվում դրանց համարժեք այլ նախադրյալներ, ինչն, իր հերթին, էլ ավելի է նվազեցնում համայնքի զարգացման և շուկայական հարաբերությունների ամրագրման հնարավորությունները:

ՎԵՐԶԱԲԱՆ

Սենք ներկայացրինք հայկական գյուղում վերջին տասնամյակում կատարված հիմնական փոփոխությունները՝ կապված տնտեսական գործունեության կազմակերպման, տնտեսավարման նոր ձևերի ներդրման, աճրազրման, գյուղական համայնքի կառուցվածքյին առանձնահատկությունների հետ։ Բնական է, որ մեկ աշխատանքի շրջանակներում հնարավոր չեր ներկայացնել կատարված փոփոխությունների ողջ բազմազանությունը։ Ընտանիքում, ներընտանեկան, ազգակցական, դրացիական հարաբերություններում կատարված բազմաթիվ տեղաշարժեր կրիտարկվեն մեկ այլ աշխատանքում։

Չնայած այդ ամենին, սույն աշխատանքում փորձել ենք ներկայացնել արդի գյուղում կատարված փոփոխությունների հիմնական ուղղությունները, դրանց պատճառները, ինչպես նաև զարգացման հնարավոր տարրերակները։

Անցումը նորին համալիր անցում է։ Տարբեր համակարգերն ու ենթահամակարգերը հարմարվում կամ համապատասխանեցվում են շուկայական տնտեսության տրամաբանությանը։ Բնական է, որ տնտեսության տարբեր ճյուղերում ընթացող գործընթացները չունեն նույն արագությունն ու ընդգրկումը, հետևաբար, տարբեր ենթահամակարգերի հարմարումը նորին ընթանում է որոշակի առանձնահատկություններով։ Սեփականաշնորհման ընթացքը և տնտեսական զարգացման միտումները, այդ թվում նաև արդյունաբերության ոլորտում, ցույց են տալիս այն խնդիրները, որոնք տակավին չեն լուծվել, քանի որ բացակայում է տնտեսության զարգացման ամբողջական

հայեցակարգը*:

Արդի գյուղում, մասնավորապես զյուլատնտեսությունում, առկա դժվարությունների մեծ մասը նույնպես պայմանավորված է այս իրողությամբ: Գյուղն այսօր ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման հստակ լծակներից գրկված օրգանիզմ է, որի գարգացումները հաճախ կարող են լինել անկանխատեսելի ու անկառավարելի: Շուկայական հարաբերությունները, որոնց ձևավորմանը ձեռնամուխ են եղել իշխանությունները, փոխսկապակցված ու փոխսպայմանավորված գործոնների ամբողջություն են և դրանցից յուրաքանչյուրի գարգացումը չափազանց կարևոր նշանակություն ունի ողջ գործներացի համար: Ըստ այդմ կարևորվում են ոչ միայն տնտեսական վերափոխումները, այլև հասարակական կառույցի՝ դրանց պատրաստ լինելու հետ կապված իրողությունները: Զնոռանանք, որ ցանկացած տնտեսական վերափոխում ինքնանպատակ է դառնում, լինելով կանխավ դատապարտված անհաջողության, եթե չի ամրագրվում հասարակական կառույցում ու չի վերարտադրվում որպես հասարակության զարգացման ընդունելի տարրերակ:

Որպես առավել ընդունելի վերցվել է արևմտյան զարգացման տարրերակը, որը, սակայն, բազմաթիվ երկրներում ամրագրվում է բավականին մեծ դժվարություններով: Բնական է, որ հայ հասարակությունը, որպես անցման շղթայի օղակ, զերծ չէր կարող մնալ նման երևույթներից: Սակայն այստեղ ոչ երկրորդական դեր են խաղում նաև նախընթաց զարգացմամբ պայմանավորված իրողությունները, որոնք յուրահատկություն են հաղորդում անցման գործներացներին: Հասարակության զարգացումը պայմանավորող այս երկու՝ ընդհանուր ետացիալիստական տարածքին բնորոշ և տեղային գործոնների ընդունումը կարևոր է զյուղի հնարավոր զարգացումների առումով: Եթե գործոնների առաջին խումքը կարևոր է տնտեսական համակարգերի կազմավորման տեսանկյունից, ապա երկրորդը ընդգծված նշանակություն է ձեռք բերում հասարակական համակարգերի հա-

* Նշենք, որ նման բնույթի դժվարությունների հանդիպում են անցման փուլում գտնվող բազմաթիվ երկրներ: Նրանցում արտահայտված են շուկայական հարաբերությունների, ժողովրդավարական հիմնարար արժեքների ամրագրման հետ կապված էական բարդություններ: Բազմէրնիկ երկրներում անցումային փուլում առկա են նաև խնդիրներ, կապված տարրեր էրթիկ հանրույթների տնտեսական, սոցիալական, քաղաքական շահերի հետ [65, 68, 77, 80]:

մար: Ըստ այդմ կարելի է փաստել, որ հայկական գյուղի տնտեսական զարգացումը պայմանավորող գործուների շարքում առաջնային նշանակություն է ստանում այն, թե ինչ ընթացք կունենան տնտեսությունը նորին համապատասխանեցնելու գործընթացներն ընդհանրապես: Տնտեսագիտները անցումը ներկայացնում են յ-տեսք ունեցող կորով, ըստ որի, տնտեսության կարճատև անկմանը և ամենացածր կետով անցնելուն հաջորդում է տևական տնտեսական վերելք: Չնայած նրանց մեծամասնությունն ամենացածր հատվածի տևողությունը սահմանում է երեքից-ինք տարի, այնուամենայնիվ, անորոշությունը գերիշխող է: Եղած փորձը ցույց է տալիս, որ ավելի հավանական է երկարատև կառուցվածքային ճգնաժամը:

Գյուղի տնտեսական զարգացումը բարդանում է նրանով, որ մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված անհատական գյուղացիական տնտեսությունը գործառնում է հիմնականում պետության կողմից չվերահսկվող ու չկանոնակարգվող դաշտում: Շուկայական հարաբերությունները, որոնց ձևավորմանն ու զարգացմանն էին ուղղված հանրապետությունում իրականացված և իրականացվող վերափոխումները, հանդես չեն գալիս որպես գյուղատնտեսության բնականոն զարգացումն ապահովող մեխանիզմ: Գրառված նյութերը ցույց են տալիս, որ գյուղացին ունի ուրույն պատկերացումներ ճգնաժամի հաղթահարման վերաբերյալ: Առաջարկվող կարևոր տարրերակը պետական հովանավորչության ակտիվացումն է և' արտադրության, և' իրացման հարցերում: Փատենք, որ այս տարրերակն ամենին չի ենթադրում խորհրդային տնտեսական համակարգերի վերակենդանացում: Պետական հովանավորչությունը կարող է արտահայտվել երկարաժամկետ գյուղատնտեսական վարկերի տրամադրման, անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայի ապահովման, արտադրողի խրախուսման ձևերով: Կարևորագույն նշանակություն է ստանում նաև գյուղատնտեսության զարգացման ամբողջական հայեցակարգի մշակումը, որը պետք է լինի ընդհանուր տնտեսական զարգացման հայեցակարգի բաղկացուցիչը, և ներառի հանրապետության բնակչության սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական առանձնահատկությունները:

Անցման փուլում պետության գործառույթների որոշակի սահմանափակման անհրաժեշտությունն ընդունելով հանդերձ, պետք է ասել, որ նման միտման պահպանումը և այլբնտրանքային տարրերակների բացակայությունը մոտ ապագայում չեն ընձեռի ճգնաժամի հաղթահարման հնարավորություններ: Տնտեսական բարեփոխումներ իրագործող պետությունը չի կարող անտեսել խորհրդային ժամանակահատվածում որոշակիորեն կայունացած տնտեսական, հասարակական, մշակութային համակարգերը: Անցումը համապատասխան հակազդեցություն է ծևավորում գյուղական համայնքում, որտեղ շարունակում են արտահայտված մնալ նորի՝ արժեքային «լավ ու վատ, ընդունելի ու ոչ ընդունելի» դաշտում վերահիմնատավորման իրողությունները: Անհատական գյուղացիական տնտեսությունը միայն սեփական ուժերով կամ ազգակցական դրացիական հարաբերությունների կարևորման միջոցով կարող է ապահովել որոշ դրական արդյունքներ, սակայն դրանք բավարար չեն լինի ընդհանուր տնտեսական առողջացման համար և կլիմեն ավելի շատ մարտավարական լուծումներ: Համայնքը հստակ պատկերացումներ ունի պետության դերի մասին: Չնայած արմատական տեղաշարժերին, դրանք շարունակում են նույնացվել պետության այն մոդելի հետ, որն ունի նաև կարգավորիչ գործառույթներ: Որակապես նոր իրավիճակում տեղի է ունենում պատկերացումների համարյա անփոփոխ ժառանգում, ընդ որում, հին. ընդունելի մոդելը հակադրվում է նորին: Պետության գործառույթների սահմանափակմանը, տնտեսական արտահայտված ճգնաժամի և ունեցվածքային շարունակվող քենոացման պայմաններում վերագրվում են միայն բացասական որակներ և տնտեսական ծանր կացությունը կապվում է այդ իրողության հետ:

Փաստորեն, կատարվում է ազգագրական տեսանկյունից խիստ ուշագրավ արժեքային փոփոխություն: Եթե 1988-90 թթ. ազգային զարգունքի պայմաններում նաև գյուղում խորհրդային պետությանը վերագրվում էին բացասական հատկանիշներ, ապա այսօր բնակչության որոշակի շրջանակներում նման միտումներ նկատվում են նորի՝ նոր պետության հանդեպ: Օտար-յուրային առանցքում փոխվում է նոր պետության գրադարած տեղը, իսկ նրա «լավ դառ-

նայլ» կապվում է բացառապես հովանավորչության ակտիվացման և գործառույթների ընդարձակման հետ: Պետության ընկալման նման մողելի առկայությունը նաև դառնում է պատճառ, որ ընդգծված նշանակություն են ձեռք բերում «սեփական անկարողության, առանց պետության միջամտության որևէ բան փոխելու անհնարինության մտայնությունը»: Գյուղի տնտեսական հավանական զարգացումն այս կտրվածքում դիտարկելիս հարկավոր է փաստել, որ պետության անրավարար աջակցությունը, իրոք, խոչընդոտում է տնտեսական կյանքի կազմակերպման բազմաթիվ գործընթացներ:

Վերափոխումներն հանգեցրին գյուղական համայնքի կառուցվածքային միատիպությանը: Եթե հաշվի առնենք, որ խորհրդային համակարգը նույնպես պարզ էր և կարևորում էր ոչ այնքան ինքնակազմակերպման և ինքնակարգավորման, որքան վերևից կառավարելի լինելու մեխանիզմները, պարզ կդառնա, որ գյուղական համայնքում մոտ ապագայում, ամենայն հավանականությամբ կշարունակի արտահայտված մնալ տնտեսական ճգնաժամի հաղթահարում-պետական միջամտություն առանցքը: Հարկավոր է հաշվի առնել ևս մեկ գործոն: Սեփականատիրոջ, հողի իսկական տիրոջ զգացողության ամրագրումը կատարվում է աստիճանաբար և տևական գործընթաց է, որը բնորոշվում է հակասական ու իրարամերժ իրողությունների արտահայտվածությամբ: Միայն գյուղատնտեսության կարևորման ճանապարհով տանելի կենսամակարդակ ապահովելու սահմանափակ հնարավորությունները, բնականաբար, ընդգծում են դժգոհությունը՝ ժողովրդական դիպուկ բնորոշմամբ «ոչ թե հողը հանձնեցին գյուղացուն, այլ գյուղացուն հանձնեցին հողին»: Գյուղում սակավ են այլընտրանքային տարբերակները: Արտագմացությունը, չնայած գյուղացիության որոշ մասն ընդգրկելուն, այնուամենայնիվ, կենսամակարդակի ածի ապահովման ընտանեկան կամ խմբային (նաև ազգակցական) տարբերակ է:

Գյուղի հասարակական և մշակութային հնարավոր զարգացումը նույնպես պայմանավորվում է բազմաթիվ գործոններով: Շարժումակության, սոցիալ-մասնագիտական խմբերի բվի սահմանափակման գործընթացները մոտ ապագայում ամենայն հավանականությամբ, կշարունակեն արտահայտված մնալ: Ուստի որպես ստեղծված կա-

ցության հաղթահարման կարևոր նախապայման, պետք է առաջադրվի հասարակական համագործակցության մեխանիզմներն ընտանեկանից ու խմբայինից համայնքային դաշտ տեղափոխելու խնդիրը: Համայնքը սահմանափակվում է ազգակցական և դրացիական շփումների ու համագործակցության շրջանակներով: Ուշագրավ է, որ ինչպես տնտեսական զարգացման, այնպես էլ այս պարագայում, պետությունը որոշակիորեն կարևորվում է նաև որպես հասարակական-մշակութային գործընթացների երաշխավոր:

Արժեքային գնահատումների տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն նաև նորույների ընտրույքը և գյուղական միջավայրում դրանց արմատավորման և տարածման ընթացքը: Արևմտյան արժեքների պարզ կրկնօրինակումը, որպես ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-մշակութային զարգացման համակարգ, չի տալիս կայուն արժեքային դաշտի ձևավորման երաշխիքներ: Ավելին, շարունակում են հանդես զալ խորհրդային շրջանի գործուներ, որոնցից իրաժարումը կատարվում է լորջ դժվարություններով, քանի որ նորն այսօր շահկապվում է տնտեսական և մշակութային համակարգերի ճգնաժամային գործընթացների հետ:

Փաստորեն, համայնքային կյանքի բոլոր ոլորտների ինքնակարգավորման տեսանկյունից զարգացման հնարավոր տարրերակները դիտարկելու ժամանակ, ըստ գյուղական միջավայրում արտահայտված կարծիքների, առաջնային նշանակություն են ստանում պետության միջամտության ակտիվացման հետ կապված գործուները: Ամենահին չբացարձականացնելով դրանք, փաստենք, որ խորհրդայինը, որի կարևորագույն հատկանիշը կառավարելի լինելն էր, շարունակում է արտահայտված մնալ արժեքային գնահատումների մակարդակում: Եթե տնտեսական գործունեության մեջ համայնքը ընդունում և մասամբ իրագործում է խմբային՝ ազգակցական կամ դրացիական հարաբերությունների օգնությամբ ծանր կացությունը հաղթահարելու տարրերակները, ապա հասարակական հարաբերություններում, չնայած նշված հարաբերությունների ունեցած որոշակի դերին, դրանք չեն դիտարկվում որպես համարժեք այլնորանքային տարրերակներ: Համայնքը, ինչպես նշվեց, սեփականաշնորհումից հետո բնութագրվում է կառուցվածքային միատիպությամբ և

պարզությամբ: Եթե ընդունենք, որ մոտ ապագայում և' օրյեկտիվ, և' սուբյեկտիվ պատճառներով պետությունը չի կարողանա վերականգնել իր կարգավորիչ գործառույթները, ակնհայտ է դառնում, որ համայնքի զարգացումը կարող է կապվել միայն ներքին ազդակների, ներուժի առավել նպատակային օգտագործման հետ: Ծովայական հարաբերություններին անցնելու տրամաբանությունը հաշվի առնելով և պետական միջամտության կտրուկ ընդլայնման խնդիրը չդնելով, կարծում ենք, որ այնուամենայնիվ, պետք է մշակվեն ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման գործընթացները խրանող այլընտրանքային տարրերակներ: Դրանք կարող են արտահայտվել կոռուպտացիայի տարրեր ձևերի կիրառմամբ, կամավոր միավորման հիմունքներով գյուղացիական տնտեսությունների խոշորացմամբ, ներհամայնքային ու միջհամայնքային կապերի ամրապնդմամբ, ընդհանուր շահերի ձևավորմամբ ու պաշտպանությամբ: Այս համակարգերի զարգացումն իր հերթին կնպաստի նաև հասարակական, համայնքային հարաբերություններում առկա բազմաթիվ բացասական իրողությունների հաղթահարմանը և կընձեռի գյուղական համայնքի՝ որպես կենսունակ, ներքին բազմազանությամբ աշքի ընկնող օրգանիզմի կայացման հնարավորություններ:

Օգտագործված փաստաթղթերի, գրականության և սկզբնաղյուրների ցանկ

Ա. Օրենսդրական ակտեր և կառավարության որոշումներ

1. Հայաստանի Հանրապետության օրենքը «Գյուղացիական և գյուղաջիական կոլեկտիվ տնտեսությունների մասին», Եր., 1991.- Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995), Եր., 1995:

2. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումը «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կիրարկելու մասին, Եր., 1991.- Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995), Եր., 1995:

3. Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգիրք», Եր., 1991.- Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995), Եր., 1995:

4. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումը «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրքը» կիրարկելու մասին, Եր., 1991.- Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995), Եր., 1995:

5. Կանոնադրություն հողամասերի հատկացման վերաբերյալ միջնորդությունների հարուցման և քննարկման կարգի մասին. - ՀՀ օրենքը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին, Եր., 1991, էջ 107-118:

6. Կանոնադրություն Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի հողային ռեֆորմի և սեփականաշնորհման կենտրոնական պետական, ճյուղային, շրջանային և տեղական հանձնա-

ժողովների մասին.-ՀՀ օրենքը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին, Եր., 1991, էջ 78-86:

7.Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշումը «Հողի սեփականության և օգտագործման իրավունքի պետական ակտերի ձևերը հաստատելու մասին».-ՀՀ օրենքը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին, Եր., 1991, էջ 91-105:

8.Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշումը «Գյուղացիական տնտեսություն վարելու համար տրամադրվող հողաբաժինների թույլատրելի նվազագույն և առավելագույն չափերի սահմանման մասին».-ՀՀ օրենքը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին, Եր., 1991, էջ 123:

9.Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշումը «Գյուղացիական տնտեսություն վարելու համար որպես սեփականություն տրամադրվող հողաբաժնի առանձին կտորների առավելագույն քանակ սահմանելու մասին».-ՀՀ օրենքը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին, Եր., 1991, էջ 124:

10.Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշումը «Լուծարվող տնտեսությունների անասնագլխաքանակի սեփականաշնորհման մասին».-ՀՀ օրենքը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին, Եր., 1991, էջ 131:

Բ. Գրականություն և սկզբնաղբյուրներ

11. Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ քնակչությունը, Եր., 1975:
12. Ավագյան Գ., Հայաստանը 1920-1990 թթ., Եր., 1997:
13. Գաբրիելյան Մ., Պետության ընկալումը գյուղացիական միջավայրում, Հայք, 1996, թիվ 205:
14. Գաբրիելյան Մ., Դաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ԴԱՆ), 1993:
15. Գաբրիելյան Մ., ԴԱՆ, 1994:
16. Գաբրիելյան Մ., ԴԱՆ, 1996:
17. Գաբրիելյան Մ., ԴԱՆ, 1997:

18. Գարբիելյան Մ., ԴԱՆ, 1998:
19. Գարբիելյան Մ., ԴԱՆ, 1999-2000:
20. Գալստյան Մ., Տարագնացությունը որպես զյուղական քնակչության եկամուտների ձևավորման կարևորագույն աղբյուր. --Հանրապետական գիտական նատաշրջան, նվիրված 1990-1994 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին, Եր., 1995, էջ 9- 11:
21. Գալստյան Մ., Սոցիալական անհավասարություն - սոցիալական շարժունություն - սոցիալական կոնֆլիկտ: Համահարաբերակցության և շարժներացի խնդիրները Հայաստանում, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 2000:
22. Գալստյան Մ., Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում (ձեռագիր):
23. Գալստյան Մ., Հայաստանի Հանրապետության քնակչության աշխատանքային միջանտական տեղաշարժերը, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 1998:
24. Գևորգյան Մ., ՀՀ զյուղատնտեսության զարգացման խնդիրները.- Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում: Գիտական հոդվածների ժողովածու, գիրք Երկրորդ, Եր., 1997, էջ 49-60:
25. Թաղեկոսյան Ա., Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում.- Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 1998:
26. Թաղեկոսյան Ա., Հասարակական շերտափորման և աղքատության ձևավորման պատկերը Հայաստանում.- Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 1998:
27. Թաղեկոսյան Ա., Արժեքային գործընթացները և միտումները 1991-1998 թթ..- Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 2000:
28. Խառատյան Հ., Սոցիալական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 1996, 13 էջ:

29. Խաչատրյան Ա., Աղքատության ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն, Վայրի և Գորիսի շրջաններ, 1994, Զեռագիր:
30. Հայաստան. Մարդկային զարգացման զեկույց, 1997, Եր., 1997:
31. Հայաստան. Մարդկային զարգացման զեկույց, 1998, Եր., 1998:
32. Հայաստան. Մարդկային զարգացման զեկույց, 1999, Եր., 1999:
33. Հայաստան. Մարդկային զարգացման զեկույց, 2000, Եր., 2000:
34. Հայաստանի Հանրապետության ազքո-պարենային համակարգի 1998 – 2002թթ. բարեփոխումների ծրագիր, Եր., 1998:
35. Հայաստանի Հանրապետության ազգային փորձամասնություններն այսօր. I (Խմբագիր՝ Յու. Ի. Ակրտումյան), Եր., 2000:
36. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., 1996:
37. Համբարձումյան Զ., Աղքատության ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն, Վայրի և Գորիսի շրջաններ, 1994, Զեռագիր:
38. Համբարձումյան Զ., Աղքատության ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն, Վարդենիսի շրջան, 1994, Զեռագիր:
39. Ղազարյան Ա., Ղազարյան Է., Տնտեսական քաղաքականությունը և զյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնադրույթները, Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում. Գիտական հոդվածների ժողովածու, գիրք Երկրորդ, Եր., 1997, էջ 36-42:
40. Մանասերեան Ն., Հայաստանի գիտատնտեսությունը յետսեփականաշնորհման փուլում. -- Դրոշակ, 1997, թիվ 11:
41. Մարության Հ., Աղքատության ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն, Վարդենիսի շրջան, 1994, Զեռագիր:
42. Մարության Հ., Աղքատության ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն, Վայրի և Գորիսի շրջաններ, 1994, Զեռագիր:
43. Պետրոսյան Հ., Աղքատության ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն, Վայրի և Գորիսի շրջաններ, 1994, Զեռագիր:

44. Պետրոսյան Հ., Աղքատության ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն, Սպիտակի և Տաշիրի շրջաններ, 1994, Զեռագիր:
45. Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության զյուղական տարաբնակեցումը, Եր., 1999:
46. Վալեսյան Լ., Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրություն, Եր., 1981:
47. Վարդանյան Լ., Հայոց ընտանեկան ծիսակարգի համայնքը արդի էքստրեմալ պայմաններում.- Շիրակի պատմամշակութային ժառանգությունը: Հանրապետական երկրորդ գիտաժողով: Զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 82:
48. Վարդումյան Դ., Կարապետյան Է., Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Եր., 1963:
49. Վարդումյան Դ., Լոռեցիների նոր կենցաղը, Եր., 1956:
50. 1989թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում; Եր., 1991:
51. Арутюнов С., Обычай, ритуал, традиция, Советская Этнография (шյопі СЭ), 1981, N:2.
52. Арутюнов С., Этническое и межэтническое в культуре.- В кн.: Народы и культуры: развитие и взаимодействие, М., 1989, с. 128-160.
53. Арутюнов С., Ромационный механизм усвоения престижных инноваций.- В кн.: Народы и культуры: развитие и взаимодействие., М., 1989, с. 186-200.
54. Арутюнов С., Традиция и инновация. Взаимодополнительность инноваций и традиций.- В кн.: Народы и культуры: развитие и взаимодействие, М., 1989, с. 160-186.
55. Арутюнян Ю., Развитие однотипной социальной структуры советских наций.- В кн.: Современные этнические процессы в СССР., М, 1977, с. 123-137.
56. Арутюнян Ю., Этносоциальные аспекты интернационализации образа жизни.- Социологические исследования (шյопі СИ),, 1981, N:2.
57. Арутюнян Ю., Национально-региональное многообразие Советской деревни.- СИ, 1980, N:3, с. 73-82.

58. Арутюнян Ю., О национальных особенностях социально-культурной жизни советской деревни.- В кн.: Современные этносоциальные процессы на селе, М., 1986, с. 5-12.
59. Бромлей Ю., Интернациональное и национальное в строительстве социализма.- СЭ, 1977, N:5.
60. Бромлей Ю., Козлов В., К изучению современных этнических процессов в сфере духовной культуры народов СССР.- СЭ, 1975, N:1.
61. Варданян Л., Традиция мужских возрастных групп у армян в конце XIX-начале XX вв.- Հայ ազգագրություն և քաղաքացիություն, թիվ 12, Եր, 1981.
62. Гурвич И., Этнокультурное сближение народов СССР.- СЭ, 1977, N:5.
63. Гурвич И., Общее и особенное в этнических процессах у различных народов СССР.- В кн.: Современные этнические процессы в СССР, М., 1977, с. 500-534.
64. Даудерштедт М., Домитра М., Эрке М., Солидарность с Восточной Европой: Сотрудничество вместо катастрофы, Бонн, 1993.
65. Дробижева Л., Интеллигенция и национализм. Опыт постсоветского пространства: В кн. Этничность и власть в полиэтнических государствах. Материалы международной конференции, М., 1994, с. 71-85.
66. Карапетян С., Овсепян Р., Региональные особенности социально-демографического развития Армянской ССР, Ер., 1986.
67. Козлов В., Этнос и культура (К проблеме соотношения национального и интернационального в этнографическом изучении культуры).- СЭ, 1979, N:3, с. 71-86.
68. Комарофф Дж., Национальность, этничность, современность: политика самоосознания в конце XX века: В кн. Этничность и власть в полиэтнических государствах. Материалы международной конференции, М., 1994, с. 35-71.

69. Маркарян Э., Узловые проблемы теории культурной традиции.- СЭ, 1981, N:2.
70. Марков Г., Советский образ жизни и проблемы этнографии.- СЭ, 1976, N:2.
71. Мкртумян Ю., Формы скотоводства в Восточной Армении: Вторая половина XIX- начало XX века. -- Հայ պատմագրություն և քաղաքականություն, պահ 6,Եր., 1974.
72. Погосян Д., Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР, Ер., 1986.
73. Ростовский Я., Макроэкономическая нестабильность в посткоммунистических странах, М., 1997.
74. Староверов В., Тенденции изменения социальной структуры сельского населения СССР на этапе развитого социализма.- СИ, 1977, N:2, с. 52-62.
75. Тер-Саркисянц А., Современные изменения в материальной культуре армянского сельского населения.- В кн.: Современные этносоциальные процессы на селе, М., 1986.
76. Тер-Саркисянц А., Армяне, история и этнокультурные традиции М., 1998.
77. Тишков В., Национальность и национализм в постсоветском пространстве (исторический аспект): В кн. Этничность и власть в полиэтнических государствах, Материалы международной конференции, М., 1994, с. 9-35.
78. Ходжабекян В., Асатрян Б., Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ер., 1990.
79. Ходжабекян В., Визе Ю., Шефер И., Демографические проблемы и воспроизводство трудовых ресурсов, Ер., 1983.
80. Янг К., Диалектика культурного плюрализма: концепция и реальность: В кн. Этничность и власть в полиэтнических государствах. Материалы международной конференции, М., 1994, с. 85-133.

Մ. Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Բ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

СОВРЕМЕННОЕ КРЕСТЬЯНСТВО
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Խմբագիր՝	Դ. Վարդումյան
Համակարգչային	
շարվածք և ձևավորում՝	Ս. Հակոբյան
Արդագրիչներ՝	Ն. Գաբրիելյան
	Ա. Հորոսյան

Հանձնված է շարվածքի 10.04. 2001 թ.: Ստորագրված է տպագրության 15.04. 2001 թ.: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեր,
տպագրության եղանակը՝ օֆսեր: Տպագրական 5 մամուլ: Տպաքանակ՝ 400: Պատվեր՝ 65:

- | | |
|---------|---|
| 375019, | ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24 գ: |
| 375019, | Издательство "Гитутюн" НАН РА, Ереван, пр.
Маршала Баграмяна 24 г . |
| 375025, | Երևանի պետհամալսարանի տպարան, Երևան,
Արովյան փող., 52: |
| 375025, | Типография Ереванского госуниверситета, Ереван, ул.
Абовяна 52. |

800 m

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090561

A II
90561